Երց. օր

խորհրդատետր պատարագին
Հայոց

Հռոմ. 1677

Լեռ
826

2G·11
8·26

1999

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## ՊԱՏԱՐԱԳԻՆ ՀԱՅՈՑ։

# LYTURGIA ARMENA.




ROMÆ,

Typis Sacræ Congregationis de Propaganda Fide,

MDCLXXVII.

43851-ա



Սրբոյ Յոհաննու Ոսկեբերան հեղինակ արարողութեան
այսորիկ պատարագի աղօթեա՛լ մեր ։

ԳՐԱԴԱՐԱՆ
библиотека
ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Գ 28225-62
(826-60)
29.829

# ՕՐԷՆՔ ԱՐԿԱՆԵԼՈՑ ՍՊԱՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ։

Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել, պարտ է այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ.

Մտցէ յաւանդատունն, հանդերձ սարկաւագօքն, ուր զգեստքն են պատրաստ։ Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի. ասասցեն ապա սաղմոս։

Քահանայք քո զգեցցին զարդ։
Փոխ։ Յիշեա տր̃ զդաւիթ, և զա̃մ։

Տուն առ տուն ամենեքեան։

Եւ քարոզեսցէ սարկաւագն։

Խնդրեսցուք հաւատով միաբանութբ̃ 'ի տե̃է, զի ողորմութե̃ զշնորհս իւր արասցէ 'ի վե̃ մեր։ Ամենակալ տր̃ ած̃ մեր կեցո և ողորմեա։

Եւ ասասցեն երկրպագան, տր̃ ողորմեա։

## ԵՒ ՔԱՀԱՆԱՅՆ ԱՍԱՍՑԷ ԶԱՂՕԹՍ։

Որ զգեցեալ ես զլոյս որպէս զհանդերձ, տր̃ մեր յս̃ քս̃. անճառելի խոնարհութբ̃ 'ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի, և պայծառացուցեր զեկեղեցի քո սբ̃։ Տր̃ ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն երկնային հանդերձ զգենուլ. արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զա̃մ ամբարշտութիս մերկացայց, որք են հանդերձ պղծութե̃, և զարդարեցայց լուսով քով։ Ընկեա յինէն զչարիս իմ, և թօթափեա զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձելոյ լուսոյդ առ 'ի քէն։ Շնորհեա ինձ քահանայական փառօք մտանել 'ի պաշտօն սրբութեց քոց ընդ այնոսիկ, որք անմեղութբ̃ պահեցին զպատուիրանս քո։ Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստին ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ քս̃, որ բարձեր զմեղս ամենեցուն, զի դու ես սրբութի անձանց մերոց։ Եւ քեզ բարերարիդ ա̃յ վայելէ փառք իշխանու-



նու-

նութեն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ մատուցեալ սարկաւագունքն, զգեցուցեն նմա զհանդերձն սաղմոսելով: Եւ դնեն յաւաշ գլոյլն ՚ի գըլուխն, և ասասցէ:

Դիր տր սաղաւարտ փրկութե ՚ի գըլուխ իմ, պատերազմիլ ընդ զօրութիւս թշնամւոյն: Շնորհօք ան մերոյ յի քի, որում վայելէ փառք, իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Շապիկն:

Զգեցո ինձ տր հանդերձ փրկութե, և պատմուճան ուրախութե, և շուրջ պատեա զգեստովս փրկութե: Շնորհօք տն մերոյ յի քի:

Գօտւոյն:

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ, և շիջուսցէ ՚ի սմնէ զխորհուրդս աղտեղիս: Եւ զօրութե շնորհաց քոց յա՛մ ժամ բնակեսցէ ՚ի սմա: Շնորհօք տն մերոյ յի քի:

Բազպանին:

Տուր տր զօրութի ձեռին իմոյ, և լուա զա՛մ աղտեղութիւս իմ, որպ զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութբ հոգւոյ և մարմնոյ: Շնորհօք տն մերոյ յի քի:

Ուրարին:

Զգեցո տր պարանոցի իմոյ զարդարութի, և սրբեա զսիրտ իմ յա՛մ աղտեղութեէ մեղաց: Շնորհօք տն մերոյ յի քի:

Վակասին, որ է շուրջառն:

Տր ողորմութբ քով զգեցո ինձ զգեստ պայծառ, և պահպանեա ընդդէմ ներգործութե չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ: Շնորհօք ան մերոյ յի քի:

Ցնծասցէ անձն իմ ՚ի տր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե, և պատմուճան ուրախութե: Իբրև փեսայի եդ ինձ պսակ, և որպ հարսն զարդու զարդարեաց զիս: Շնորհօք ան մերոյ յի քի:

Եւ



Եւ յետ զգենլոյ զբոլոր զգեստուցն, եկեսցէն առաջի սրբոյ սեղանոյն։ Եւ լուասցէ զձեռս։

Սաղմոս։

Լուացից։ Փոխ։ Կոտ, Յարուց

Մէ զածածնին։

Աղօթք։

Տէր, որ զաղաչանս մեր բարեխօսութեամբ սբ ածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քոյ. և աղաչանօք ամ սրբոց քոց, լուր մեզ տր Աստուածմ, ներեա, քաւեա, և թող զմեղս մեր։ Եւ արժանաւորեա գոհանալով փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սբ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ապա խոնարհեալ պատարագիչ քահանայն առաջի այլոց քահանայից աւընթեր կացելոցն, ասէ։

Խոստովանիմ առաջի այ, և սրբուհւոյ ածածնին, և առաջի ամ սրբոց, և առաջի ձեր հարք և եղբարք զամ մեղս, զոր գործեալ եմ։ Զանզի մեղայ խորհրդով, բանիւ, և գործով, և ամ մեղօք, զոր գործեն մարդիկք, մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վս իմ յայ զթողութիւն։

Պատասխանեն որք մերձն են։

Ողորմեսցի քեզ ած հզօրն, և թողութիւն շնորհեսցէ ամ յանցանաց քոց, անցելոյն, և այժմուս, և յառաջիկայէն փրկեսցէ զքեզ, և հաստատեսցէ յամ գործս բարիս, և հանգուսցէ զքեզ ՚ի հանդերձեալ կեանս. Ամէն։

Պա․

Պատասխանեսցէ և ինքն:

Ազատեսցէ և զձեզ մարդասէրն ած՟, և թողցէ զամ՟ յանցանս ձեր: Տացէ ժամանակ ապաշխարելոյ, և գործելոյ զբարիս: Ուղղեսցէ և զառաջիկայ կեանս ձեր շնորհօք սբ՟ Հոգւոյն, հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւիտեանս. Ամէն:

Իսկ եթէ եպիսկոպոս լիցի խորհրդածուն, առցէ զսբ՟ կոնքեռն, և ածցէ ՚ի վր՟ լանջացն և զպատուական եմիփորոնն, և եկեսցեն առընթեր ընծայարան սեղանոյն, լուացեալ զձեռս, և մատուցեալ առաջի սեղանոյն, լուռ և անմռունչ ասասցէ զաղօթս առ սբ՟ Հգին անօրինիչ գործոյն:

Ամենակալ աստուած բարերար, մարդասէր ած՟ բոլորից, յօրինօղ երևութից և աներևութից, փրկօղ և հաստատօղ, խնամօղ և խաղաղարար հօր հզօր Որդի: Ապցեմք բազկատարած մաղթանօք, գոչմամբ հեծութե՟ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ, մատչիմք մեծաւ դողութբ՟, սաստիկ երկիւղիւ, մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քում անզննելի տէրութեդ, եբր աթոռակցի, փառակցի, և արարչակցի հայրենի անկարօտ պատւոյդ, և քննօղի ծածկութե՟ խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ, էմմանուէլի, զքեզ առաքչի, փրկչի, և կենդանատուի, և արարչի ամ՟ի: Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութեդ միասնական ած՟ութեդ, յորոց մի և դու Ճանաչիս անհաս: Քև, և ՚ի ձեռն քո առաջինքն նահապետականի տոհմին շաւաւիղք, տեսանօղք անուանակոչեալք, զանցեալսն, և զգալոցսն անստուերապէս բարբառով բանի վերապատմեցին: Որդի այ՟ քարոզեալ զքեզ մովսէսի, որ ՚ի գնայն քո ՚ի վր՟ ջուրցն, անպարագիր զօրութե՟, ահեղ շրջարկութբ՟ տածողականաւ, թևապարփակ պաշտպանողօրէն զթափեալ ՚ի ծնունդս նորոգս, զանապականն խորհուրդ ծանուցեր: Յոր կերպարան օրինակութե՟, նախ քան զկատուցանել զլոյծ մածեալ վերջնում վարագուրիդ, յօրինեցեր կարօղ տիրապէս զբովանդակ բնութիւս ամենից բնաւից, բոլորից գոյից, ամ՟էից յանէից: Քև ստեղծանին ՚ի նորոգութե՟ յարութե՟ ամ՟ եղև ՚ի քո առ ՚ի քէն, յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղոյս, և օր առաջին երկրին կենդանեաց: Քեզ հնազանդեցաւ միութբ՟ կամացն, ըստ հօրն խրատու էակիցն հօր անդրանիկն որդի մերոյս կերպիւ: Զքեզ աւետարանեաց Ճշմարիտ ած՟ հաւատար և համագոյ հօր իւրոյ հզօրի: Զառ ՚ի քեզ հայհոյութիւն անքաւելի քարոզեաց, և եբր զած՟ամարտից դքն հեստեալոյն չարաբանական բերանն կարկեաց: Ի զիւրն շնորհեաց արդարն և անարատն դաւիչն ամ՟ի: Որ վս՟ մեղաց մերոց մատնեցաւ, և յարեաւ վս՟ զմեզ արդարացուցանելոյ: Նմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բարեբանութի, ընդ հօր ամենակալի յաւիտենից յաւիտեանս. Ամէն:

Դարձեալ կրկնեսցէ զ՚ի նոյն կարգ բանի, մինչև վերահայեցողութի յուսոյն հրաշապէս ողջեալ յայտնեսցի աւետարանել վերասէն զկրկին խաղաղութե:

Աղաչեմք, և աղերսեմք արտասուալից հառաչմամբ, յամ՟ անձնէ զփառաւորեալ արարչութիդ, անեղծ և անստեղծ անժամանակ Որդւոյդ գթածի, որ բարեխօսդ ես վս՟ մեր յանմռունչ հեծութիւս առ ողորմածն հայր: Որ զբս՟ պահես, և զմեղուցեալս մաքրես, և

սա

տանձրս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյդ հօր: Որդ՛ ազատեա զմեզ յամ անմաքուր գործոց, որք ոչ են հաճոյք քում բնակութե: Եւ մի շիջցին առ ՚ի մենջ լուսոյդ շնորհաց փայլմունք ՚ի տեսականացս աչաց իմաստից: Ա՟ զի զքեզ ուսաք միանալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթից, և ընտիր փարուց լինելոց: Եւ քանզի մինդ յերրորդութենդ պատարագի, և միւսդ ընդունի հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի խորոյ: Իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթևանս պատուականս, ամ պատրաստութբ, ՚ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութե ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութե: Եւ հալեսցի ՚ի հրոյս յայսմանէ գայթակղութիւն մեր, ոպ մարգարէին կենդանախառոյկ կայծակամբն ունելեացն մաքուցմանս: Զի յայսմ ամի քոյդ քարոզեսցի գթութի, որպէս որդւոյդ ոյ, հօրդ քաղցրութի: Որ զանառակ որդին մերձեցոյց ՚ի հայրենի ժառանգութիւն, և զպոռնիկն յառաջեցոյց ՚ի յերկնային արքայութիւն արդարոցն երանութե: Այո այո, և ես մի եմ ՚ի նոցանէ, և զիս ընկալ ընդ նոսին, իբր մարդասիրութե կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, արեամբդ քո ստացեալս: Զի յայսմ ամի յամենայնում ծանիցի մարդասիրութի քո, ընդ հօր փառաւորեալ համապատուաբար, ՚ի մի կամս, և ՚ի մի իշխանութի գովութե: ՚ի ձայն: Զի քո է գթութի, և կարողութի, մարդասիրութի, զօրութի, և փառք յաւիտեանս. Ամէն:

Ապա յարուցեալ եկեսցէ առ ընծայարան սեղանոյն, առ որ մատուցեալ նախապատրաստեացն զնշխարն, զոր առեալ քահանայն դիցէ ՚ի մաղզմայն, ասելով:

Յիշատակ տն մերոյ յի քի:

Եւ առեալ զգինին արկցէ խաչանիշ ՚ի ակիւն: Նոյնպէս և զպակասիկ մի ջուր արկցէ ասելով:

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութե տն աստուծոյ, և փրկչին մերոյ յի քի:

Եւ ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ յոհաննու ոսկեբերանի:

Ած ած մեր, որ զերկնաւոր հացդ, զտր մեր յս քս, զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ, և կեցուցիչ, և բարերար, օրհնել և սրբել զմեզ: Նոյնին դու տր, օրհ ✠ նեա՛ և այժմ զառաջադրութիւս զայս: Ընկալ զսա յերկնային քո սեղանդ: Յիշեա ոպ բարերար և մարդասէր զմատուցօղս, և զոս որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապարտ պահեա ՚ի քահանայագործութե ածային խորհրդոց քոց: Զի օրհ և փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութե փառացդ հօր և որդւոյ, և հոգւոյդ սրբոյ. այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ սքօղեսցէ ասելով:

Տր թագաւորեաց, և այլն:

Եւ արկցէ խունկ ասելով:

Խունկ մատուցանեմ առաջի քո քրիստոս բուրումն հոգևորական: Ընկալ ՚ի մբ յերկնային, և յիմանալի քո մատուցարան ՚ի հոտ անուշից: Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս և զպարգևս Ոգւոյդ սրբոյ: Եւ քեզ մատուցանեմք զփառս

զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ · այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն ;

Եւ երիցս երկրպագեալ քահանայն, համբուրեսցէ զսեղանն : Եւ սարկաւագն կացեալ ՚ի մէջ տաճարին, ձայնեսցէ ասելով :

Օրհնեա տէր :

Եւ քահանայն ՚ի ձայն ասասցէ :

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ, և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Եւ սկսցին դպիր եկեղեցականքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն :

Եւ յաւարտման երգոյն քարոզէ Սարկաւագն :

Եւ ևս խաղաղութեան զՏէր :

Ժողովուրդն : Տէր ողորմեա :

Սարկաւագն : Կեցո և ողորմեա :

Ժողովուրդն : Կեցո տէր :

Սարկաւագն : Օրհնեա տէր :

Եւ քահանայն ասասցէ զաղօթս :

Տէր աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է, և փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ . Դու ըստ առատ մարդասիրութեան քում, նայեաց ՚ի ժողովուրդս քո, և ՚ի տաճարս յայս սուրբ : Եւ արա ընդ մեզ, և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւնս քո, և զգթութիւնս : Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Քահանայն ասասցէ խորհրդաբար :

Տէր Աստուած մեր կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քո պահեա, սրբեա զոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո : Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, և մի թողուր զյուսացեալս ՚ի քեզ : Զի քո է կարողութիւն, և զօրութիւն, և փառք, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Խաղաղութիւն ✠ ամենեցուն :

Որ հասարակաց զայս, և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար : Դու և այժմ զծառայից քոց խնդրուածս, առ ՚ի յօգուտն կատարեա, շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեան, և ՚ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականսն պարգևելով : Զի բարերար և մարդասէր ես աստուած, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Եւ ապա ասասցի շարական ըստ պատշաճի աւուրն : Եւ ՚ի միջի տանն երթիցեն առաջի բեմին, և երկրպագեսցեն երիցս :

Եւ քահանայն ասասցէ զաղօթս :

Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց ՚ի սպասաւորութիւն փառաց քոց : Արա այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց, և լինել պաշտօնակից մեզ, և փառաբանակից քում բարերարութեան : ՚Ի ձայն :

ձայն ։ Զի քո է կարողութիւն և զօրութիւն, և փառք յաւիտեանս ․ Ամէն ։

Ասէ համբուրեսցեն զսեղանն ․ և յաւարտման շարականին, գոչեսցէ Սարկաւագն ։

Պռօսխումէ ։

Ասէ ասասցեն զերեքսրբեանն ձայնիւ ։

Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա՛ մեզ ։

Ասէ քահանայն զոյգ սմին ասասցէ 'ի ծածուկ զաղօթս ։

Սուրբ, որ 'ի սուրբս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն, և ամ՟ երկնային զօրութիւնքն քեզ երկրպագանեն ։ Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամ՟ արարածս ։ Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում, և նմանութեան, և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն ․ և ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր 'ի վ՟ն նր՟ զապաշխարութիւն փրկութեան ։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայքս քո, 'ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զօրինաւոր երկրպագութիւն, և զփառաբանութիւն մատուցանել քեզ ։ Դու տր՟ ընկալ 'ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, և պահեա՛ զմեզ քոյին քաղցրութեամբդ ։ Թող մեզ զամ՟ յանցանս մեր զկամայ և զակամայ ։ Սրբեա՛ զհոգի զմիտս և զմարմինս մեր․ և շնորհեա՛ 'ի սրբութեան պաշտել զքեզ զամ՟ աւուրս կենաց մերոց ․ բարեխօսութեամբ սրբուհւոյ ածածնին, և ամ՟ սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան ։ Զի սուրբ ես տէր ա՟ծ մեր, և քեզ վայել է փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Ասէ սարկաւագն քարոզեսցէ ։

Ասէ և՛ս խաղաղութեան զտր՟ ։
Վ՟ն խաղաղութեան ամ՟ աշխ՟ ։

Սարկաւագն ձայնեսցէ ։

Օրհնեա՛ տէր ։

Ասէ քահանայն բաղկատարած ասասցէ 'ի ծածուկ զաղօթս ։

Տէր ա՟ծ մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում ։ Զգթութիւն քո առաքեա՛ 'ի վ՟ մեր և ամենայն ժողովրդեանս, որք ակնունին առ 'ի քէն առատ ողորմութեանդ ։ Ի ձայն ։ Զի ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով, և քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

Ասէ քահանայն նստցի յաստիճանն ։ Ասէ սկսցեն ․ Սղմ՟. Կշ՟, ըստ խորհրդոյ աւուրն ։ Ասէ ընթերցցին զգիրս մարգարէականս, և առաքելականս ։ Ասէ զկնի, Ալէլու, ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն ։ Ասէ յաւարտմանն, Սարկաւագն բարձր ձայնիւ գոչեսցէ ։

Օրթի ։

Քահանայն դարձցի 'ի խորանէն, և խաչակնքեսցէ 'ի վ՟ ժողովրդեանն, և ասասցէ ։



ԼԵՕԻ

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան:
Ժողվդ: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սրկգն: Երկիւղածութեամբ լուարուք:
Սրբոյ աւետարանիս ըստ Մատթէոսի:
Ժողվդ: Փառք քեզ տր ած մեր:
Սրկգն: Պռօսխումէ:
Ժողվդ: Ասէ Օթէոս:

Եւ սրկգն ընթերցցի զաւետարանն: Եւ յաւարտն ասասցեն ամենեքեան:

Փառք քեզ տր ած մեր:

Եւ ասասցեն զհաւատամքն:

Հաւատամք ՚ի մի ած հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի երևելեաց և աներևութից: Եւ ՚ի մի տր յս քս յորդին այ, ծնեալ յայ հօրէ միածին, նախ քան զամ յաւիտեանս: Ած յայ, լոյս ՚ի լուսոյ, ած ճշմարիտ, յայ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն համագոյակից հօր, որով ամ ինչ եղև յերկինս և ՚ի վր երկրի, երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան, և վն մերոյ փրկութեան իջեալ ՚ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով: Որով էառ մարմին հոգի և միտ, և զամ որ ինչ է ՚ի մարդ ճշմարտապէս, և ոչկարծեօք: Չարչարեցեալ, խաչեցեալ թաղեցեալ յերրորդ աւուր յարեալ, ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս: Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւատամք և ՚ի սբ Հոգին յանեղն, և ՚ի կատարեալն, որ ՚ի հօրէ և յորդւոյ բղխի: Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս, և յաւետարանս: Որ էջն ՚ի յորդանան, քարոզեաց զառաքեալսն, և բնակեցաւ ՚ի սբսն: Հաւատամք և ՚ի մի միայն յընդհանրական և յառաքելական եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց: Յարքայութիւնն երկնից: Եւ ՚ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն էր երբեմն, յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սբ Հոգին: Կամ թէ յոչ էից եղեն, Կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին այ, և կամ զսբ Հոգին: Եւ թէ փոփոխելի են, կամ այլայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի:

Լուսաւորչին:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ երրորդութեան, և մի աստուածութեան հօր և որդւոյ, և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից:
Ժողվդն: Ամէն:

Եւ սարկաւագն քարոզեսցէ ՚ի ձայն:

Եւ ևս խաղաղութեան զտր աղաչ:
Ժողվդն: Տր ողորմեա:
Սրկգն: Եւ ևս հաւատով:

Մինչ նոքա երգեն, քահանայն զաղօթս ասէ ՚ի ծածուկ:

Տէր մեր և փրկիչ յս քս, որ մեծ ես ողորմութբ, և առատ պարգևօք բարերարութե քոյ: Որ դու քոյին կամաւ ՚ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի և մահու, յաղագս մեղաց մերոց, և պարգևեցեր առատապէս զպարգևս Հոգւոյդ սրբոյ երանեցեալ առաքելոցն: Հաղորդս արա և զմեզ տր, աղաչեմք

զքեզ

զքեզ ամենայնի պարգևացդ, թողութիւն մեղաց, և ընդունելութիւն Հոգւոյդ սրբոյ:
Ի ձայն: Որպէս զի արժանաւորք եղեցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:

Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Խաղաղութեամբ քով քս՟ փրկիչ մեր, որ 'ի վեր է քան զամ՟ միտս և զբանս ամրացո՛ զմեզ, և աներկիւղ պահեա՛ յամ՟ չարէ: Հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն: Զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:
Օրհնեալ տէր մեր յս՟ քս՟:
Ժողովուրդն: Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Տէր ա՟ծ օրհնեսցէ ✠ զամենեսեան:
Սարկաւագն: Սաղմոս ասացէք:

Սրբասացութիւն ըստ խորհրդեան աւուրն:

Յետ որոյ սարկաւագն ձայնեսցէ:

Մի՛ ոք յերեխայից, մի՛ ոք:

Դպիրքն եղանակեսցեն:

Մարմին տէրունական:

Եւ ապա եղանակեսցեն:

Որք ըստ քրովբէ:

Եւ 'ի սարկաւագացն վերաբերցի սրբազան հացն, և օրհնութեան բաժակն 'ի ս՟բ սեղանն:

Եւ մինչ նոքա երգիցեն, քահանայն խոնարհեսցի առաջի սրբոյ սեղանոյն, և խորհրդաբար աղօթեսցէ 'ի ծածուկ:

Ոչ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ մատչել 'ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց. քանզի պաշտել զքեզ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանց իսկ է: Սակայն վս՟ անչափ բարերարութեան քոյ, անպարագրելի բանդ հօր եղեր մարդ, և քահանայապետ մեր երևեցար: Եւ իբր տր՟ ամենեցուն այսմ սպասաւորութեան և անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ: Զի դու ես տր՟ ա՟ծ մեր, որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց: Որ 'ի վր՟ քերովբէական աթոռոյ բազմիս, սերովբէից տր՟, և թագաւոր Իսրայէլի: Որ միայն ս՟բ ես, և 'ի ս՟բս հանգուցեալ: Աղաչեմ զքեզ միայն բարերար, նայեա՛ յիս 'ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սրբեա՛ զհոգի և զմիտս իմ յամ՟ պղծութենէ չարին: Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ ս՟բ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայական շնորհս, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և քահանայագործել զքո անարատ մարմինդ, և զպատուական արիւնդ: Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի՛ մերժեր զիս 'ի ծառայից քոց: Այլ արժանի՛ արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն 'ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ: Զի դու ես որ մատուցանես, և մատչիս, և ընդունիս, և տաս, քս՟ ա՟ծ մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն Հարբդ, և ամենասուրբ և բարերար Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ ընծայքն վերաբերեցին ՚ի սեղանն մբ. և քահանայն խնկարկեաց ՚ի վր սեղանոյն. և լուացէ զձեռս ասելով: Լուացից:

Եւ քարոզեսցէ սարկաւագն: Եւ ևս խաղաղութե զՏր: Ժողովուրդն: Տր ողորմեա: Սարկաւագն: Եւ ևս հանապազ:



Տր Աստծ յս քս, որ խաչեցար վս մեր ողորմեա մեզ:

Քահանայն, թէ սարկաւագ կայցէ 'ի խորհրդեանն, մինչ նա զքարոզն ասիցէ համբուրեսցէ զսեղանն, և խաչակնքեալ ✠ զժողովուրդն, բազկատարած կայցէ առաջի սեղանոյն. և ասասցէ 'ի ծածուկ զաղօթս:

Տէր Աստուած զօրութեանց, և արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զընաւէս 'ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր: Որ և զմեր հողեղէն բնութիւնս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դու տէր, որում պատարագեմք զպատարագս, ընկալ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս, և աւարտեա զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քո: Տուր թողութիւն մեղաց պարգևեա ճաշակողացս զհացս զայս, և զբաժակս:

'Ի ձայն: Շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի: ընդ որում քեզ հօր՝ միանգամայն և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան:

Ժողովուրդն: Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Ողջոյն տուք միմեանց:

Եւ համբուրեսցեն զսեղանն, և զմիմեանս:

Ձայնեսցէ սարկաւագն:

Ահիւ կացցուք, երկիւղիւ:
Դպիրքն: Առ քեզ Աստուած:
Սարկաւագն: Պատարագ Քրիստոս:
Դպիրքն: Ողորմութիւն և խա:

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ✠ 'ի վերայ ժողովրդեանն և ասասցէ:

Շնորհք, սէր և աստուածային սրբարար զօրութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեան:

Ժողովուրդն: Եւ ընդ հոգւոյդ:
Սարկաւագն: 'Ի վեր ընծայեցու:
Դպիրքն: Ունիմք առ քեզ:
Սարկաւագն: Եւ գոհացարուք:
Դպիրքն: Արժան և իրաւ:

Քահանայն ձեռնամած աղօթեսցէ 'ի ծածուկ:

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ հայր ամենակալ: Որ քոյին անքննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զկրճիմն: Որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս 'ի քեզ: Եւ զննելի բնութեամբ ըստ 'ի կուսէն տնտեսութեն հաճեցաւ բնակել 'ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ զերկիրս երկին արար: Զի որում ոչն հանդուրժէին

ժէին աւաշխ կալ զուարթնոցն Հոգք, զարհուրեալք՝ ՚ի փայլակնացայտ, և յան-մատոյց լուսոյ Աստուածութեդ, եղեալ այդ-պիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պա-րել հոգեղէն պարս :
Դ ձայն : Եւ ընդ սերովբէսն, և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութիւն յօ-րինել նուագս, և համարձակապէս գո-չելով աղաղակել ընդ նոսին, և ասել : Սբ սբ սբ տր զօ :

Քահանայն բազկատարած աղօթեսցէ ՚ի ծածուկ, մինչ նոքա երգեսցեն :

Սբ սբ սբ ես ճշմարտապէս և ամենասբ, և ո՞վ ոք պան-ծասցի բովանդակել բա-նիւ զքո ՚ի մեզ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս : Որ և անդէն իսկ ՚ի նախնումն զանկեալն ընդ մեղօք զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր, մարգարէիւք, օրինացն տուչութիւն, քահանայութիւն, և տուա-րակերպ երինջոցն մատուցմամբ : Իսկ ՚ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատա-կնիք, ետուր մեզ զորդին քո միածին, պարտապան և պարտս, զենումն և օծեալ, գառն և երկնաւոր հաց, քա-հանայապետ և պատարագ : Սա զի բաշխի ՚ի միջի մերում միշտ ան-ծախապէս: Սա զի եղեալ հաւաստեաւ և առանց ցնորից մարդ, և անշփոթ մի-աւորութիւն մարմնացեալ յԱստուածին և ՚ի սբ կուսէն մարիամայ: Ճանապարհոր-դեաց ընդ ամ կիրս մարդկային կեն-ցաղոյս առանց մեղաց. և յաշխար-հակեցոյց և յաւիտենին փրկութեան մե-րոյ եկեալ կամաւ ՚ի խաչն :
Առեալ զհացն ՚ի սբ, յԱծային, յա-նարատ, և ՚ի պատուական ձեռս իւր :
Օրհ ✠ նեաց, գոհացաւ, եբեկ, ետ իւրոց ընտրեալ, սբ, և բազմեալ աշա-կերտացն, ասելով :
Առէք կերէք.

## այս է մարմին իմ

Որ վս ձեր և բազմաց բաշխի ՚ի քաւու-թիւն և ՚ի թողութիւն մեղաց :

Նոյնպէս և զբաժակն առեալ.

Օրհ ✠ նեաց, գոհացաւ, էարբ՝, ետ իւրոց ընտրեալ սբ և բազմեալ աշա-կերտացն ասելով :
Արբէք ՚ի սմանէ ամենեքեան :

## այս է արիւն իմ նորոյ ուխտի՝ որ յաղագս ձեր՝ և բազմաց հեղանի ՚ի քաւութիւն և ՚ի թո-ղութիւն մեղաց:

Եւ զայն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդին քո միածին: Եւ իջեալ ՚ի ստորին վայրս մահու՝ մարմնովն, զոր ՚ի մերմէս ընկալաւ՝ յազգակցութենէ : Եւ զնիգս դժոխոցն ազատեալ հզօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած, զԱստուած կենդանեաց, և մեռելոց :

Եւ առեալ զընծայս ՚ի ձեռն ասասցէ ՚ի ցած :

Եւ արդ՝ մեք Տէր ըստ այսմ հրամանա-տրութեան, յառաջ բերեալ զայս խոր-հուրդ փրկական մարմնոյ և արեան մի-ածնի քոյ: Յիշեմք զդորա, որ վս մեր զփրկագործ չարչարանսն, Զկենդա-նատու խաչելութիւն, Զերեքօրեայ զթաղումն, Զերանելի յարութիւն, Զաստուածապէս համբարձումն, Զնստելն

ընդ

ընդ աջմէ քո հայր, Զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք:

Եւ դիցէ զընծայսն ՚ի վ՟ր սեղանոյն, և ասասցէ ՚ի ձայն:

Եւ զքոյս ՚ի քոյոցս քեզ մատուցանեմք, ըստ ա՟մի, և յաղագս ամենեցուն:

Դպիրքն: Յա՟մի օրհնեալ ես տ՟ր:

Մինչ նոքա երգիցեն, քահանայն բազկատարած աղօթեսցէ ՚ի ծածուկ:

ԶՔեզ արդարև տ՟ր ա՟ծ մեր գովեմք, և զքեզ գոհանամք հանապազ: Որ զանց արարեր զմերով անարժանութ՟ես, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութ՟ե, յորոց յոյժ թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք հանապազ: Այլ ՚ի քո բազմագեղ ներողութենդ ցանկ ապաւինեալ, համարձակիմք մերձենալ ՚ի սպասաւորութ՟ի մարմնոյ և արեան միածնի քոյ, տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի: Որում վայել է փառք իշխանութ՟ի և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութ՟ի ✠ ամենեցուն:

Սրկ՟գն: Ա՟յ երկրպագես:
Ժ՟ղվրդն: Առաջի քո տ՟ր:

Քահանայն խոնարհեսցի, և ասասցէ:

ԵՐկրպագանեմք և աղաչեմք, և խնդրեմք ՚ի քէն բարերար ա՟ծ, առաքեա՛ ՚ի մեզ, և յառաջի եղեալ յընծայս յայս զմշտնջենաւորակից քո, և զէակից ո՟գ Ս՟րբ:

Եւ կանգնեալ խաչակնքեսցէ զընծայսն, ասելով ՚ի ցած:

Որով զհաց օրհ ✠ նեալ մարմին ճշմարտապէս արարեր տ՟ն մերոյ, և փրկչին յ՟ի ք՟ի:
Որով զհաց օրհ ✠ նեալ մարմին ճշմարտապէս արարեր տ՟ն մերոյ, և փրկչին յ՟ի ք՟ի:
Որով զհաց օրհ ✠ նեալ մարմին ճշմարտապէս արարեր տ՟ն մերոյ, և փրկչին յ՟ի ք՟ի:
Եւ զբաժակ օրհ ✠ նեալ արիւն ստուգապէս արարեր տ՟ն մերոյ, և փրկչին յ՟ի ք՟ի:
Եւ զբաժակ օրհ ✠ նեալ արիւն ստուգապէս արարեր տ՟ն մերոյ, և փրկչին յ՟ի ք՟ի:
Եւ զբաժակ օրհ ✠ նեալ արիւն ստուգապէս արարեր տ՟ն մերոյ, և փրկչին յ՟ի ք՟ի:
Որով զհաց և զգինի օրհ ✠ նեալ մարմին և արիւն ճշմարտապէս արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի, փոխարկելով Ո՟գւով քով սրբով:

Եւ երիցս անգամ կրկնեսցէ զաղօթս: Եւ սարկաւագն ՚ի ցած. Ամէն:

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն:

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութ՟ի, ՚ի քաւութ՟ի և ՚ի թողութ՟ի մեղաց:

Եւ ապա տարածեալ զձեռս աղօթեսցէ ՚ի ծածուկ:

ՍՈվաւ շնորհեա՛ զսէր զհաստատութ՟ի, և զղձալի զխաղաղութ՟ի ա՟մ աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ, և ա՟մ ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց, աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց,

նելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց, և որք ՚ի պատերազմունս բարբարոսաց։

Սովաւ և օդոց շնորհեա՛ զբարեխառնութիւն, և անդոց զպտղաբերութիւն, և ախտացելոց ՚ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութիւն։

Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ՚ի քս ննջեցեալսն, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս, և զընաւ ուխտ եկեղեցւոյ քում սրբոյ, և զամն, որք յաշխարհական կարգէ զօրս և զկանայս հաւատով վախճանեալս։

Դ ձայն։ Ընդ որս և մեզ այց արասցես բարերար ած աղաչեմք։

Ժղվ.։ Յիշեա տր և ողորմեա։

Քահանայն։ Ածածնին սրբոյ կուսին Մարիամու, և յովհաննու մկրտչին, ստեփաննոսի նախավկային, և ամ սրբոց, եղիցի յիշատակ ՚ի սբ պատարագս աղաչեմք։

Ժողովուրդն։ Յիշեա տր և ող։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն, ձեռնամած ասասցէ։

Առաքելոց սրբոց, մարգա։

Եւ մինչ սարկաւագն զքարոզն ասիցէ, քահանայն զաղօթս սկսցի, զի ՚ի միասին աւարտեսցեն։

Յիշեա տր և ողորմեա, և օրհնեա զսբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ, և ազատեցեր խաչիւն սրբով. շնորհեա սմա զանշարժ զխաղաղութիւն։

Յիշեա տր և ողորմեա և օրհնեա զամ ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութբ համառօտեն ՚ի մեզ զբանն ճշմարտութեան։

Առ այս յիշելոյն զՊապն, յիշեսցի և առաջնորդն տեղւոյն ըստ պատշաճի և պատուոյն. թէ Պատրիարգ իցէ. թէ Արքեպիսկոպոս իցէ. և թէ եպիսկոպոս իցէ։ Հայոց Կաթուղիկոսն, և կամ Եպիսկոպոսն [illegible], եթէ իցէ հերետիկոս, կամ հերձուածող, ոչ երբէք և ոչ ուրեք յիշեսցի։ Իսկ եթէ իցէ ուղղափառ յիշեսցի միայն ՚ի թեմի և ՚ի վիճակի իւրում, և ոչ երբէք արտաքոյ նորին։

Դ ձայն։

Եւս առաւել զսրբազան Պապն մեր, զտր Այս Անունն։ Եւ զերջանիկ Պատրիարգն մեր, զտր Այս Անունն. կամ զարքեպիսկոպոսն մեր, զտր Այս Անունն։ Կամ զեպիսկոպոսն մեր, զտր Այս Անունն։ Շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութբ։

Եւ ապա ՚ի ձախակողմն սեղանոյն քարոզեսցէ սարկաւագն ձեռամբ աղօթից։ Զոր մի ոք մտացածին կարծելով շփոթեսցէ, զի մեծին խորհուրդ է առացեալ զառաջնոց օրինայն։

Գոհութիւն և փառաբանու։

Եւ ընդ սկսանել սարկաւագին զքարոզս, քահանայն զաղօթս սկսցի, զի ՚ի միասին աւարտեսցեն։

Յիշեա տր և ողորմեա և օրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս, և զպատարագիս մատուցօղս, և պարգևեա սոցա զպէտոյսն և օգտակարսն։

Յիշեա տր և ողորմեա և օրհնեա զուխտաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ քո սրբոյ, և որք յիշեն զաղքատս ողորմածութբ։ Եւ հատո՛ նց զպարտս նց,

ըստ

ըստ ընդունելոյս առատութեան քո, հարիւ-
րապատիկ աստ, և 'ի հանդերձելումն:
Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և գթա՛ 'ի հո-
գիս հանգուցելոցն, հանգո՛ զնոսին, և
լուսաւորեա՛, և դասաւորեա՛ ընդ սուրբս
քո յարքայութեանդ երկնից, և արժանի՛
արա ողորմութեան քում:
Յիշեա՛ տէր և զհոգի ծառայի քոյ. Այս
Անուն: և ողորմեա՛ նմա ըստ մեծի
ողորմութեան քում, և հանգո՛ այցելու-
թեամբ լուսոյ երեսաց քոց: Եւ եթէ կեն-
դանի է. փրկեա զնա յամ որոգայթից
հոգւոյ և մարմնոյ:
Յիշեա՛ տէր և զայնոսիկ, որք յանձնե-
ցին մեզ յիշատակել յաղօթս զկենդա-
նիս և զհանգուցեալս. կառավարեա՛
զկամս հայցմանց նոցա և զմերս, ընդ-
ուղղորդն, և որ լինի է փրկութեան. և
վարձատրեա՛ բոլորեցունց զանանց, և
զերանելի բարութեանդ: Եւ զտեալ
զխորհուրդս մեր տաճարացո՛ յընդու-
նակութիւն մարմնոյ և արեան միածնի
քոյ տն մերոյ և փրկչին Յի Քի: Ընդ-
որում քեզ հօր ամենակալի, հա-
մերձ կենդանարար և ազատիչ սուրբ
հոգւովդ, վայել է փառք իշխանութիւն
և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտե-
անս յաւիտենից. Ամէն:

Քահանայն դարձցի, և խաչակնքեսցէ
զժողովուրդն, ասելով բարձր:

Եւ եղիցի ողորմութիւն մեծին այ, և
փրկչին մերոյ Յի Քի ✠ ընդ ձեզ, ընդ
ամենեսեան:

Ժողովուրդն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Եւ ևս խաղաղութեան:
Ժողովուրդն: Տէր ողորմեա:
Սրկւգն: Ամենայն սրբովք զորս:

Եւ անդէն ընդ քարոզութեանն քահա-
նայն բազկատարած խորհրդաբար
աղօթեսցէ 'ի ծածուկ:

Աստուած ճշմարտութեան, և հայր ո-
ղորմութեան գոհանամք
զքէն որ 'ի վեր քան
զերանելի նահապե-
տացն, զմեր պարտաւորեցելոցս առա-
ւել մեծարեցեր զբնութիւն: Այլ զի նոցա
այ կոչեցար, իսկ մեզ հայր հաճեցար
անուանիլ գթալով: Եւ այժմ տէր աղա-
չեմք զքեզ, զայսպիսի նոր 'ի քէն զնո-
րոգ, և զպատուական անուանադրու-
թեանս շնորհս, որ ըստ օրէ պայծառա-
ցուցեալ ծաղկեցո՛ 'ի մէջ եկեղեցւոյ
քում սրբոյ:

Դձայն:

Եւ տուր մեզ համարձակաձայն բար-
բառով բանալ զբերանս մեր, կարդալ
զքեզ երկնաւոր հայր, երգել և ասել:

Եւ ժողովուրդն բազկատարած եղա-
նակեսցեն:

Հայր մեր, որ յերկինս:

Եւ մինչ նք երգեսցեն քահանայն աղօ-
թեսցէ 'ի ծածուկ:

Տէր տերանց, այ աստուածոց, թա-
գաւոր յաւիտենական, արա-
րիչ ամ արարածոց, հայր տն
մերոյ Յի Քի, մի տար զմեզ 'ի փոր-
ձութիւն, այլ փրկեա՛ 'ի չարէ, և ապրե-
ցո՛ 'ի փորձութենէ: Դձայն:
Զի քո է արքայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս. Ամէն:
Քահանայն: Խաղաղութիւն ընդ ✠ ա-
մենեսեան:
Ժողովուրդն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Այ երկրպագեսցուք:
Ժողովուրդն: Առաջի քո տէր:

Քահանայն խոնարհեսցի և տէ՛ր ժողովուրդն ընդ նմա 'ի վայր, և քահանայն աղօթեսցէ 'ի ծածուկ ։


Որ աղբիւրդ ես կենաց, և բղխումն ողորմութեան Աստուծոյ, ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկրպագանեն աստուածութեան քո։ Պահեա՛ զսոսա ամբողջս, տպաւորեա՛ յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակի առ 'ի ժառանգութիւն և 'ի վիճակ հանդերձելոցդ բարեաց ։

'ի ձայն ։

Քսիւ Յսիւ տր մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ և Հօր ամենակալի վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․
Ամէն ։

Եւ քահանայն առեալ զսբ հացն 'ի ձեռն Սարկաւագն ձայնեսցէ բարձր ։

Պրոսխումէ ։

Եւ քահանայն բարձրացուսցէ անկներև ժողովրդեանն և ասասցէ ։

Ի սրբութիւն սրբոց ։
Ժողովուրդն բարձր ձայնիւ ։
Միայն սբ, միայն տր, յս քս, 'ի փառս այ Հօր ․ Ամէն ։
Քահանայն ։ Օրհնեալ հայր սբ ած ճշմարիտ ։
Ժողովուրդն ։ Ամէն ։
Քահանայն ։ Օրհնեալ որդին սբ ած ճշմարիտ ։
Ժողովուրդն ։ Ամէն ։
Քահանայն ։ Օրհնեալ հոգին սբ ած ճշմարիտ ։
Ժողովուրդն ։ Ամէն ։
Քահանայն ։ Օրհնութիւն և փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․
Ամէն ։
Դպիրքն ։ Հայր սբ, որդի ։

Եւ մինչ նք երգիցեն զայս, քահանայն խոնարհեսցի, և աղօթեսցէ 'ի ծածուկ ։

Նայեաց տր մեր յս քս, յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ ։ Եկ 'ի սրբել և 'ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս, և աստ պատարագիս ։
Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ, և 'ի պատուական յարենէ․ և 'ի ձեռս մեր ամ ժողովրդեանս ։

Եւ զայս ասացեալ երկրպագեսցէ, և համբուրեսցէ զսեղանն, և առեալ զսբ մարմինն ողջ թացցէ յանապական արիւնն, և ասասցէ ։

Տր ած մեր, որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քո քրիստոնեայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն 'ի թողութիւն մեղաց, և արժանի արարեր զմեզ հաղորդել սբ մարմնոյ և արեան միածնի քո ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տր, արա զմեզ արժանի ընդունել զսբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն ։ Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և սբ հոգւոյդ ․ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

Եւ բարձրացուսցէ անկներև ժողովրդեանն, և ասասցէ առ նմ բարձր ։

Նմք 'ի մէջ պատուական մարմնոյ և յարենէ տն մերոյ և փրկչին յի քի, ճաշակեցուք սրբութե՛, որ իջեալ 'ի յերկնից բաշխի 'ի միջի մե֊ րում: Սա է կենանք ✠, յոյս, յարութի՛, քաւութի՛, և թողութի՛ մեղաց: Սաղ֊ մոս ասացէք տն այ մերոյ, սաղմոս ա֊ սացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի 'ի կառս քերովբէա֊ կանս:

Սարկաւագն ձայնեսցէ բարձր:

Սաղմոս ասացէք տն այ:

Դպիրքն եղանակեսցեն:

Քս պատարագեալ բաշխի:

Մինչ նք երգիցեն, քահանայն առցէ զմարմինն 'ի ձեռն, և համբուրեսցէ արտասուօք ասելով զայս:

Զոր օրհնութի՛, կամ զոր գոհութի՛ 'ի վե՛ր հացիս և բաժակիս ասասցուք, այլ յն զքեզ միայն օրհնեմք, հանդերձ հայր բդ և ամենասուրբ հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Դարձեալ ասասցէ:

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես քս որդի այ, որ բարձեր զմեղս աշխարհի:

Եւ բեկեալ արկցէ 'ի բաժակն արեանն, ասելով:

Լրումն Ոգւոյն սրբոյ:

Եւ ապա առեալ զմի մասն 'ի ձեռն իւր ասասցէ 'ի ծածուկ արտասուօք և գոհութե՛ առ հայր:

Հայր սբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութե՛ միածնի քոյ, և լուսաւորեցեր մկրտութե՛ հո֊ գևոր աւազանին: Արժանի արա ըն֊ դունել զսբ խորհուրդս զայս մեզ 'ի մե֊ ղաց թողութի՛: Տպաւորեա՛ 'ի մեզ զշնորհս Ոգւոյդ սրբոյ, որպ 'ի սբ առա֊ քեալսն, որք ճաշակեցին, և եղեն քաւիչք ամ աշխարհի: Եւ արդ՝ տր հայր բարերար, զհաղորդութիս զայս մասնաւորեա՛ ճաշակման երեկոյին աշա֊ կերտացն, բառնալով զխաւար մեղաց իմոց: Մի՛ հայեր յանարժանութիւս իմ, և մի՛ արգելուր զշնորհս Ոգւոյդ սրբոյ: Այլ ըստ անքաւ մարդասիրութե՛ քոյ, պարգևեա՛ զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց: Որպէս խոստացար և ա֊ սաց տր մեր յս քս, թէ որ ուտէ զմար֊ մին իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան: Արդ՝ արա՛ զսա մեզ 'ի քա֊ ւութի՛, զի որք կերիցեն և արբցեն 'ի սմանէ, հանցեն գոհութի՛ և զփառս հօր և որդւոյ և ոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութի՛ ✠ ընդ ամենեսեան.

Գոհանամ զքեզ քս թագաւոր, որ արժանի արարեր զիս զա֊ նարժանս հաղորդիլ սբ մար֊ մնոյ և արեան քոյ: Եւ այժմ տր աղա֊ չեմ զքեզ, մի՛ լիցի սա ինձ 'ի դատապար֊ տութի՛, այլ 'ի քաւութի՛ և 'ի թողու֊ թի՛ մեղաց, յառողջութի՛ հոգւոյ և մարմնոյ, և 'ի կատարումն, ամ գործոց առաքինութե՛: Որ՛ զի սրբեսցէ սա զշունչս իմ, զհոգի և զմարմին իմ, և արասցէ զիս տաճար և բնակարան ամե֊ նասբ երրորդութեդ: Զի ընդ քեզ քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սբ ոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## Յոհաննու ոսկեբերանի ։

Գոհանամ և մեծացուցանեմ, և փառաւորեմ զքեզ Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանաւորեցեր յաւուրս յայսմիկ հաղորդակից լինել աստուածային և սոսկալի խորհրդոյ քոյ, անարատ մարմնոյդ և պատուական արեանդ։ Առ այսորիկ ընդ սոսա 'ի բարեխօսութեն ունելով, աղաչեմ յամենայն աւուրս և 'ի ժամանակս կենաց իմոց, ընդ սրբութե քոյ պահեա զիս ։ Որպէս զի յիշելով զքաղցրութեանս քո, և կենդանի լինել ընդ քեզ ։ որ վասն մեր չարչարեցար և մեռար և յարուցեար ։

Մի մերձեսցի Տէր իմ և Աստուած խորտակեցն, կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով ։ Ամենակարող մաքրեա զիս սոքօք յամենայն մեղուցեալ գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ ։ Ամրացո զկեանս իմ Տէր յամենայն փորձութենէ, և զպատերազմօղն իմ դարձո յետս պատկառեալ և ամաչեցեալ, որպէս յառնէ 'ի վր իմ ։ Ամրացո զզգայս միտաց և լեզուի իմոյ, և զամենայն ճանապարհս մարմնոյ իմոյ ։ Եր հանապազորդ ընդ իս, ըստ անսուտ խոստմանց քոց, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես 'ի նմա ։ Դու ասացեր մարդասէր, կացո զբանս աստուածային անլուծանելի հրամանաց քոց ։ Քանզի դու ես Աստուած ողորմութե և գթութե և մարդասիրութե, և պարգևիչ ամենայն բարեաց, և քեզ վայելէ փառք հանդերձ հարբդ և ամենասուրբ ոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն ։

Եւ ապա տնանգրեսցէ զկնքն, և խնդրեսցէ 'ի ճշմարտէն Աստուծոյ զպէսպէս հայցուածս անձին իւրոյ, և ժողովրդեան և աշխարհի․ և թողութե խնդրեսցէ իւրոց յանցուածոցն թշնամեաց և ատելեաց ։ Եւ անդէն աչխէ և զողոթէ ճաշակեսցէ 'ի մարմնոյն, և արբցէ 'ի բաժակէն, ասելով ։

Մարմին քո անապական լիցի ✠ Յիսուս 'ի կեանս, և սուրբ արիւն քո 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց ։

Եւ թէ սարկաւագ կայցէ, հաղորդեսցի և նա ։ Եւ ապա սարկաւագն զսկիհն, և դարձցի առ ժողովուրդն ասելով բարձր ։

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք ։

Ժողովուրդն ասասցէ բարձր ձայնիւ ։

Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ ․

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն, բայց ոչ 'ի բերանն, այլ 'ի յաւելն ուտելով զսրբութիւն ։ Եւ ամենայն արժանաւոր ժողովուրդն հաղորդեսցին ։ Եւ յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր ։

Կեցո Տէր ✠ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւն քո, հովուեա և բարձրացո զսոսա յայսմհետէ մինչև յաւիտեան ։

Եւ յետ հաղորդութեան երգեսցեն ։

Լցաք 'ի բարութենէ քոց ։

### Գոհանայն ։

Գոհանամք զքէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ զսուրբ եկեղեցի, տաճար սրբութե, ուր փառաբանի սուրբ երրորդութիւն ․ Ալէլուիա ։
Գոհանամք զքէն Քրիստոս թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբդ քով սրբով ․ Ալէլուիա ։

Գոհանամք զքէն ոգիդ Ճշմարիտ, որ նորոգեցեր սբ զեկեղեցի, անարատ պահեա՛ հաստատով երրորդութեդ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան. Ալէլուիա։

Սարկաւագն։ Եւ ես խաղա։ Եւ ես հաւա։

Ժողովուրդն։ Գոհանամք զքէն։

Եւ քահանայն ասասցէ 'ի ծածուկ։

Գոհանամք զքէն քս ած, որ զայսպիսի ճաշակումն բարութե շնորհեցեր մեզ 'ի սրբութե կենդանութե։ Սովիմբ պահեա զմեզ սբս և անարատս բնակեալ զմեօք քո ածային խնամօքդ։ Հովուեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց, և բարերարաց։ Որով ամրացեալք յամ բանսարկուին ընդդիմութեց, քումդ և եթ արժանի եղիցուք լսել ձայնի։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ և Ճշմարիտ հովուին հետևիլ, և առ 'ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեդ երկնից։ Ած մեր, և տր և փրկիչ յս քս, որ ես օրհնեալ ընդ Հօր, և ընդ սբոյ ոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութե ✠ ընդ ամենեսեան։

Անքննին անհաս երրեակ ինքնութեդ, հաստիչ, ընդունօղ և անբաժանելի միաբնակամ սբ երրորդութեդ, վայելէ փառք իշխանութի, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ երկրպագեալ համբուրեսցէ զսեղանն։ Եւ իջեալ 'ի մէջ եկեղեցւոյն, ասասցէ զաղօթս։ Դձայն։

Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ տր։ և սբ առնես զյուսացեալսն 'ի քեզ։ Կեցո՛ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիս քո։ Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա։ Սրբեա զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութի տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա ածային զօրութե քով։ Եւ մի թողուր զյուսացեալքս 'ի քեզ։ Զխաղաղութի քո պարգևեա ամ աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նց, և ամ ժողովրդեանս։ Զի ամ տուրք բարիք, և ամ պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի քէն, որ ես հայր լուսոյ։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ժողովուրդքն ասասցեն երիցս անգամ։

Եղիցի անուն։

Եւ քահանայն դարձցի 'ի վր ժողովրդեանն՝ ասելով։

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես քս փրկիչ մեր։ Որ լցեր զամ հայրակամ տնօրէնութիս քո. Լցո և զմեզ Ոգւովդ քով սրբով։

Ժողովուրդն։ Ամէն։

Եւ ասասցեն զսաղմոսն.

Օրհնեցից զտր։

Եւ ընդ սաղմոսելն բաշխեսցի նշխար ժողովրդեանն Յաւարտմանն։

Փառք Հօր Եւորդ։

Եւ

Ն՟ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր։

Օրհնեալք ✠ եղերուք 'ի շնորհաց սբ̃ Ոգւոյն, երթայք խաղաղութբ̃, և տր̃ եղիցի ընդ ամենեսեան. Ա. մէն։

Ն՟ դարձցի յարևելս, երկրպագցէ առաջի սեղանոյն, և ասասցէ։

Տր̃ ած̃ յս̃ քս̃ ողորմեաց ինձ։

Ն՟ մտեալ 'ի սարկաւագարանն մերկացի 'ի զգեստուցն։ Եկեալ առաջի սեղանոյն, երկրպագեսցէ երիցս, և երթիցէ խաղաղութբ̃։

Սկիզբն սրբոյ Աւետարանին ըստ Յովհաննու։

Ն՟ կարդասցէ զսկիզբն սրբոյ աւետարանին ըստ Յովհաննու, մինչև ցայն տեղին, ուր ասէ։

Լի շնորհօք և ճշմարտութբ̃։

Վ. Ն Ր Զ.

# ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՊԱՏԱՐԱԳԻ

# MINISTERIVM

## MISSAE.




ROMÆ,

Typis Sacræ Congregationis de Propaganda Fide,

MDCLXXVII.

# ԽՐԱՏՔ ՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ:

Առնու քահանայն երկու սարկաւագունս, և մտանէ 'ի սրբարանն, և ասեն սաղմոս:

Քահանայք քո զգեցցին: Յիշեա տր զդաւիթ և զամ: Զ փոխն 'ի մանս: Ե՛ ասեն, Փառք հօր: Այժմ և միշտ:

Քարոզ: Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի տէ, զի զողորմութիւն զշնորհս իւր արասցէ 'ի վրյ մեր, տրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի:

Ողորմեաց մեզ տր ած մեր ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ: Ե՛ ասէ քահանայն երկոտասան: Տր ողորմեա: Ե՛ ապա զաղօթքն:

Ե՛ սարկաւագն առնու զսաղաւարտն, և ասէ:

Ե՛ եւս խաղաղութեան զտր աղաչեսցուք:

Քահանայն: Օրհնութիւն ✠ և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Նոյնպէս և շապկին ասէ, և ուրարին, և գօտւոյն, և բազպանին, և շուրջառին:



Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ամէն:

Իջ՛ դպիրքն երգեն :

ԽՈՐՀՈՒՐԴ խորին անհաս անսկիզբն , որ զարդարեցեր զվերին պետութիւն , ՚ի յառաջագոյն անմատոյց լուսոյն , գերապանծ փառօք զդասս հրեղինաց :

Անճառահրաշ զօրութբ ստեղծեր զադամ պատկեր տիրական , և նազելի փառօք զգեստաւորեցեր ՚ի դրախտն ադենի տեղի բերկրանաց :

Չարչարանօք քո մբ միածնիդ նորոգեցան արարածք ամ, և վերստին մարդն անմահացաւ , զարդարեալ ՚ի զգեստ անկողոպտելի .

Անձրևածին բաժակ հրահոսան , որ հեղեր յաշակերտսն ՚ի մբ վերնատունն , հեղ և ՚ի մեզ Հոգիդ մբ ած , ընդ պատմուճանի քոյ զիմաստութիւն :

Տան քում վայելէ սրբութի , որ զգեցար զվայելչութի , սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ , պատեա զմեզ մեր ճշմարտութբ :

Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդդէմ աստեղաց , հաստատեա զբազուկս մեր կարողութբ, համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիր :

Իմաստութք թագ ՚ի գլուխ , պատեսցես զմիտս և զգայարանս , խաչանիշ ուրարամբ ՚ը աչարանի, ծաղկեալ ոսկեթել ՚ի զարդ խորանիս :

Բամից բոլորից տիրապէս ամծպետական , նախորոտապատ սիրով զգեստաւորեցեր քում մբ խորհրդոյդ լինել սպասաւոր .

Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո ✠ անշարժ պահեա , և զերկրպագուս անուանդ քում պահեա ՚ի խաղաղութե :

Քահանայն : Խնկեսցէ : Սարկաւագն

Դ. ատ : Տուն առ տուն գնին ՚ի լման :

Փառք հօր : Այժմ և միշտ :

Քահանայն : Իջ՛ մբ սրբուհւոյ ամծածնին մր ընկալ զաղաչանս մեր և կեցօ :

Սարկաւագն : Սուրբ զամծածինն և զամ սբս բարեխօս արասցուք առ հայր ՚ի յերկինս , զի կամեցեալ ողորմեսցի , և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր :

Ամենակալ մր ամծ մեր կեցօ և ողորմեա :

Քահանայն : Ընկալ մր զաղաչա :

Իջ՛ ասէ : Խոստովանիմ առաջի այ :

Իջ՛ մերձակայ քահանայն ասէ :

Ողորմեսցի : Քահանայն : Ազատեսցէ և զձեզ մարդա :

Դպիրքն : Յիշեսջիր և զմեզ առաջի անմահ գառին այ :

Քահանայն : Յիշեալ լիջիք առաջի անմահ գառին այ :

Դպիրքն ասիցեն Սղմս , 99.

Ըրձուեցէք : Որ ասի : Աղաղակեցէք առ :

Քարոզ : Սբ եկեղեցեաւս աղաչեսցուք զմր , զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց , և կեցուսցէ շնորհիւ ողորմութե իւրոյ : Ամենակալ մր ամծ մեր կեցօ և ողորմեա :

Քահանայն : Ի մէջ տաճարիս , և առա

ջի ա՟ծընկալ ս՟բ նշանացս և ս՟բ տեղւոյս, խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք, զքո զհրաշալի և զյաղթօղ զյարութիւն քո փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ ս՟բ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս, յաւիտենից.
Ամէն:

Մտից առ: Սարկաւագն: Գ՝մա:
Տուն առ տուն զփոխն 'ի լման:

Երգն: Օրհնեսցուք զհայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջ փառաբանութե, և երգել զերգս հոգևորս: Ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո և ողորմեա՛:

Քահանայն: Ի յարկի սրբութե և 'ի տեղւոջ փառաբանութե, հրեշտակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս: Առաջի ա՟ծընկալ և պայծառացեալ ս՟բ նշանաց, և ս՟բ սեղանոյս, խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք, զքո զհրաշալի և յաղթօղ զյարութիւն քո փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ սուրբ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:

Եւ ապա ձայնեն զվարդապետն: Եւ դպիրքն եղանակեն մեղեդի խորհրդաւոր. կամ տաղ:

## Աւետեաց:

Բարբառ աւետեաց ձայնիւ: Կրկնէ: Գաբրիէլ գոչէր սրբուհւոյն: Ու քեզ աւաքիմ մաքուր: Կրկնէ: Պատրաստեալ տեղի տէրունեայն:

## Ծննդեան:

Նոր ծաղիկ այսօր բղխի յարմատոյն Յեսեայ: Եւ դուստր Դաւթի ծնանի զորդին ա՟յ:

## Տ՟ընդառաջին:

Ք՟ն փառաց թագաւորն այսօր եկեալ յընծայումն: Կատարելովն զօրէնս քառասնօրեայ գալստեամբ:

## Ծաղկազարդին:

Աստ եբրայեցւոց մանկունքն զերգ քերովբէիցն առեալ, հեթանոսական 'դասուց տօնակից վեհիցն եղեալ:

## Յարութե:

Ես ձայն զուարթուն ստեմ, որ գոչէր 'ի քառաթևեն: 'Ի քառաթևեն գոչէր. Կրկնէ: Ձայն աւնէր 'ի սանդարամետսն. Կրկնէ:

## Նոր կիրակէի:

Այսօր նոր արև հարեալ, 'ի նորահրաշ արեգակնէն. 'ի նորահրաշ: Այսօր նոր շուշան ծաղկեալ 'ի նորատունկ բուրաստանէն:

## Համբարձման:

Այսօր անդրանիկ հօր միածին որդին, յերկինս սլանայ ադամային կերպիւ: Նուագներբողից եղանակեն այսօր հոյլք հոգեղինաց երկնաւորացն խմբից.

## Ոգւոյ գալստեան:

Նուագեմք Ոգւոյն նուագս վայելուչս: Վայելուչս բանիւ զարարչութեն նախ ասեմք:

## Վարդավառին:

Գոհար վարդն վառ առեալ. Կրկնէ: գոհար:

գոհար ։ Ի վէհից վարսից արփենից ։
Որհնէ ։ Իվէհ ։ Ի վեր 'ի վի՛ վարսից
պըպջէր ծաղէկ ծովայեն ։ պըպջէր ։

Փոխմանն ։

Այսօր գաբրիէլ հրեշտակապետն եկեալ, բերեալ զըրաբխնն, պսակ յաղթօղ կուսին ։ Այսօր կոչելով առ բոլորից ա՛րն զուարճար բարձրելոյն և զընակարան Որդւոյն ։

Խաչի ։

Խաչն 'ի նախնումն երևեցաւ ծաղկեալ 'ի գրախտն ա՛ծատուէնկ. մխիթարիչ եղեալ սէթայ, նախագուշակ հօրն ադամայ ։ Սեք 'ի յայն փայտն եմք յուսացեալ, յոր ա՛ր յս բևեռեցաւ. և խոնարհեալ երկրպագեմք ա՛ծընկալ մե նշանիս ։

Հրեշտակապետաց ։

Գովեստ բերկրանաց քաղցրաձայնեալ երգեմք ձեզ հրեշտակապետք, և հրեշտակաց գումարք ։

Առաքելոց ։

Արեգակն արդար, որ 'ի հօրէ ծագեալ, զառաքեալսն քո անճառ շնորհօք լցեալ ։ Իւր լուսոյ ցուցեալ հաստատնեայք … մեծն թաթէոս բարթուղիմեաւ փայլեալ ։

Մարգարէից ։

Ա՛ ծայլն լորոցն անճառ խորհրդածուք սուրբ մարգարէք ։ Ռանիւ պատմօղք զապագայիցն յաւաջագոյն զեղելութեն ։

Հայրապետաց ։

Ի հանդէս տօնի քոյ ըախացեալ ցընծամք, հայր և վարդապետ մե հայրապետ Պետրոս ։

Օրհնութեան որ ասես, մեղեդի մի՛ ասեր ։

Ե Ր Գ ։

Նորեալդ յոյ, ձվերջանիկ մե քահանայ ։
Ն մանեալ ահարոնի, և մովսէսի մարգարէին ։
Այնմ, որ զգեստուցն էր յօրինօղ զոր ահարոն միշտ զգենոյր ։
Յօրինէր զպատմուճանն, զոր 'ի չորից կազմեալ նիւթոց ։
Ի կարմրոյ 'ի կապուտոյ, 'ի բեհեզոյ 'ի ծիրանւոյ ։
Թել զթելն յօրինէր, կարգն առաջին էր կարկեհան ։
Եւ զօծումն զարշապարեն շուրջանակի բոլորաշէն ։
Եւ ընթացս զարշապարեն հնչէր երկիր, ցնծայր խորան ։
Արդ 'ի նոյն նմանութե քս զմեր ածեր յօրինէ ։
Յորժամ մտցես 'ի մե խորանն, անդ յիշեսցես զմեր ննջեցեալսն ։
Յորժամ առնես զպատարագն, յիշեա և զես զըապմամեղս ։
Օի և մեզ Որդմեսցի 'ի միւսանգամ իւր գալստեանն ։
Հօրն փառք, Որդւոյն պատիւ, և մե Ոգւոյն այժմ յաւիտեան ։
Յաւիտեանս յաւիտենից քս օրհնեալ 'ի համայնից ։

Շարական խնկարկութե ։

Յ Այս յարկ նուիրանաց ուխտի ա՛ն տաճարիս, ժողովեալքս ատանօր 'ի խորհուրդ պաշտման պաղատանաց առաջիկայ սուրբ պատարագիս, խնկօք անուշիւք խումբ առեալ

առեալ պարեմք 'ի վերնայարկ սրահս խորանիս, ուղղութ՟ ընկալ զաղօթս մեր, ո՟ր բուրումն անուշահոտ խնկոց տաշխեց և կենամոնաց. և զմատուցողքս պահեա սրբութ՟ միշտ և հանապազ քեզ սպասաւորել: Բարեխօսութ՟ մօր քոյ և կուսի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից:

Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր ո՟ք զեկեղեցի արեամբ քո ք՟ս, և ըստ երկնայնոցն կարգեցեր 'ի սմա զդասս առաքելոց, մարգարէից, ո՟ք վարդապետաց: Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերիկոսաց խունկ մատուցանեմք առաջի քո Տ՟ր յօրինակ ըստ հնումն զաքարիաս: Ընկալ առ 'ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն աբէլի զնոյի և զաբրահամու: Բարեխօսութ՟ վերին քո զօրաց միշտ անշարժ պահեա զաթոռ հայկազնեայց:

Խնկաւ յոյժ դուստր լուսոյ մայր ո՟ք կաթուղիկէ մանկամբ քո սիոն, զարդարեալ պճնեա հարսն պանծալի երկնանման լուսաձեւ խորան: Զի օծեալն Ա՟ծ, միսն 'ի յէէն անծախապէս 'ի քեզ միշտ պատարագի, հօր 'ի հաշտութի, մեզ 'ի քաւութի բաշխէ զմարմին և զարիւն իւր ո՟ք: Մ՟ն իւր կատարմամն ո՟ք անօրէնութեն, շնորհէ զթողութի կանգնողի տաճարիս:

Զ անապական կոյսն մարիամ ա՟ծածին խոնարհեալն ո՟ք եկեղեցի, ուստի տուաւ հացն անմահութե, և բաժակ մեզ ուրախարար, տուք օրհնութի նմա հոգևոր երգով:

Սարկաւագն: Օրհնեա տէր:

Քահանայն: Օրհնեալ թագաւորութիւն հօր:

Եւ ասէ ժամամուտ ըստ պատշաճին: Կայ եդեալ 'ի Ճաշու ժամուն: Արոց սրբագրութիւքն կամ 'ի վերջն սպասաւորութեա այսորիկ:

Սարկաւագն: Եւ ևս խաղաղութե զՏ՟ր աղաչեսցուք: Ընկալ, կեցո, և ողորմեա:
Օրհնեա Տ՟ր:
Քահանայն: Օրհնութի և փառք:
Խ աղաղու:
Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Ա՟ծ երկրպագեսցուք:
Դպիրքն: Առաջի քո Տ՟ր:
Քահանայն: Տ՟ր ա՟ծ մեր, որոյ կարո:

Եւ ասէ փոխն և շարականն ըստ պատշաճի, ո՟ր և եդեալ է 'ի Ճաշումն: Բայց շարականն ասելի ըստ սրբագրութեն, որ եդեալ է 'ի վերջն սպասաւորութեա այսորիկ:

Սարկաւագն: Օրհնեա տէր:
Քահանայն: Զի քոյ է կարողութի:
Սարկաւագն: Պռօսխումէ:

Եւ ասէ Սբ ա՟ծ, այսպէս:

Սբ ա՟ծ, Սբ և հզօր, Սբ և անմահ ողորմեա մեզ:
Սարկաւագն: Եւ ևս խաղաղութե զՏ՟ր աղաչեսցուք:
Դպիրքն: Տ՟ր ողորմեա:
Սարկաւագն: Վ՟ն խաղաղութե ա՟մ աշխարհի, և հաստատութե սրբոյ եկեղեցւոյ, զՏ՟ր աղաչեսցուք;
Դպիրքն: Տ՟ր ողորմեա:
Սարկաւագն: Վասն ամենայն ո՟ք և ուղղափառ եպիսկոպոսաց, զՏ՟ր աղաչեսցուք:
Դպիրքն: Տ՟ր ողորմեա:

Աստ յետ յիշելոյն զՓաւլն, յիշեսցի ևս առաջնորդն տեղւոյն, ըստ պատշաճի և պատուոյն, թէ Պատրիարք իցէ, թէ արքեպիսկոպոս իցէ, և թէ եպիսկոպոս իցէ: Բայց Կաթուղիկոսն

գլխոյն կամ եպիսկոպոսն Հայոց, եթէ իցէ հերձուածող կամ հերետիկոս, ոչ երբէք, եւ ոչ ուրեք յիշեսցի: Իսկ եթէ իցէ ուղղափառ յիշեսցի միայն 'ի թեմի եւ 'ի վիճակի իւրում, եւ ոչ երբէք արտաքոյ նորին:

Սարկաւագն: Վ՟ս սրբազան Փափին մերոյ Տեառն, Ա՟յս Ա՟նուն: Եւ՟ Պատրիարքին, կամ Արքեպիսկոպոսին. կամ Եպիսկոպոսին մերոյ տեառն, Ա՟յս Ա՟նուն: զՏ՟ր աղաչեսցուք:
Դպիրքն: Տ՟ր ողորմեա.
Սարկաւագն: Վ՟ս վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց, եւ ամ՟ ուխտի մանկանց եկեղեցւոյ. զՏ՟ր աղաչեսցուք:
Դպիրքն: Տ՟ր ողորմեա:
Սարկաւագն: Վ՟ս բարեպաշտ թագաւորաց եւ ա՟ծասէր իշխանաց, զօրաց եւ զօրավարաց նոցին, զՏ՟ր աղաչեսցուք:
Դպիրքն: Տ՟ր ողորմեա:
Սարկաւագն: Վ՟ս հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով 'ի Ք՟ս ննջեցին, զՏ՟ր աղաչեսցուք:
Դպիրքն: Յիշեա Տ՟ր եւ ողորմեա:
Սարկաւագն: Եւ՟ եւս եւ վ՟ս միաբանութե՟ ճշմարիտ եւ ս՟բ հաւատոյս մերոյ, զՏ՟ր աղաչեսցուք:
Դպիրքն: Տ՟ր ողորմեա:
Սարկաւագն: Զանձինս մեր եւ զմիմեանս Տ՟ն Ա՟յ ամենակալին յանձն արասցուք:
Դպիրքն: Քեզ Տ՟ն յանձն եղիցուք:
Սարկաւագն: Ողորմեաց մեզ Տ՟ր Ա՟ծ մեր, ըստ մեծի ողորմութե՟ քում. ասասցուք ամենեքեան միաբանութ՟բ:
Դպիրքն: Տ՟ր ողորմեա, Տ՟ր ողորմեա, Տ՟ր ողորմեա:
Սարկաւագն: Օրհնեա տէր:
Քահանայն: Զի ողորմած եւ մարդա՟ս:

Գիրքն, Առաքելոյն, եւ Աւետարանն, 'ի ճաշուն գիտ:

Եւ ասասցեն զհաւատամքն:



Հաւատամք 'ի մի Ա՟ծ Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից: Եւ՟ 'ի մի Տ՟ր Յ՟ս Ք՟ս, յորդին Ա՟յ, ծնեցեալ յԱ՟յ հօրէ միածին. նախքան զամ՟ յաւիտեանս: Ա՟ծ յԱ՟յ, լոյս 'ի լուսոյ, Ա՟ծ ճշմարիտ, յԱ՟յ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն հանգոյակից հօր, որով ամ՟ ինչ եղեւ յերկինս եւ 'ի վ՟ր երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան, եւ վ՟ս մերոյ փրկութե՟ իջեալ 'ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն, Հոգւովն սրբով: Որով էառ մարմին հոգի եւ միտ, եւ զամ՟ որինչ է 'ի մարդ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեցեալ, խաչեցեալ թաղեցեալ, յերրորդ աւուր յարեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք հօր 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որոյ թագաւորութե՟ն ոչ գոյ վախճան: Հաւատամք եւ 'ի ս՟բ Հոգին յանեղն եւ 'ի կատարեալն, որ 'ի հօրէ եւ յորդւոյ բղխի: Որ խօսեցաւ յօրէնս եւ 'ի մարգարէս, եւ յաւետարանս: Որ էջն 'ի յորդանան, քարոզեաց զառաքեալսն, եւ բնակեցաւ 'ի ս՟րբսն: Հաւատամք եւ 'ի մի միայն ընդհանրական եւ յառաքելական եկեղեցի: 'Ի մի մկրտութի՟, յապաշխարութի՟, 'ի քաւութի՟ եւ 'ի թողութի՟ մեղաց: 'Ի յարութի՟ մեռելոց: 'Ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց: Յարքայութի՟ն երկնից: Եւ՟ 'ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն էր երբեմն, յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր ս՟բ Հոգին: Կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութէ՟ ասեն լինել զորդին Ա՟յ,

եւ

ԼԵՕԻ

և կամ զո՛ր Ոգին ։ Եւ թէ փոփոխելի են, կամ այլայլելի, զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի ։

Սարկաւագն ։ Օրհնեա տէր ։
Քահանայն ։ Իսկ մեք փառաւորես ։
Սարկաւագն ։ Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։
Դպիրքն ։ Տէր ողորմեա ։

Սարկաւագն ։

Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք 'ի Տեառնէ Աստուծոյ, և 'ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ 'ի ժամուս պաշտաման և աղօթից ։ Զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ ձայնի աղաչանաց մերոց ։ Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի 'ի վերայ մեր ։ Աղօթք մեր և խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա ։ Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով, արդարութեամբ վաստակել 'ի գործս բարիս ։ Զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր, Տէրն ամենակալ, կեցուսցէ, և ողորմեսցի ։
Դպիրքն ։ Կեցո Տէր ։
Սարկաւագն ։ Զժամս որ պատարագիս, և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել, հաւատով 'ի Տեառնէ խնդրեսցուք ։
Դպիրքն ։ Շնորհեա Տէր ։
Սարկաւագն ։ Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց 'ի Տեառնէ խնդրեսցուք ։
Դպիրքն ։ Շնորհեա Տէր ։
Սարկաւագն ։ Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց, 'ի Տեառնէ խնդրեսցուք ։
Դպիրքն ։ Շնորհեա Տէր ։
Սարկաւագն ։ Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւն, յօգնականութիւն անձանց մերոց, 'ի Տեառնէ խնդրեսցուք ։
Դպիրքն ։ Շնորհեա Տէր ։
Սարկաւագն ։ Եւ ևս և վասն միաբանութեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք ։
Դպիրքն ։ Տէր ողորմեա ։
Սարկաւագն ։ Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալի յանձն արասցուք ։
Դպիրքն ։ Քեզ Տէր յանձն եղիցուք ։
Սարկաւագն ։ Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում ։ Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։
Դպիրքն ։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա ։
Սարկաւագն ։ Օրհնեա տէր ։
Քահանայն ։ Արդէս զի արժանա ։
Դպիրքն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Սարկաւագն ։ Աստուծոյ երկրպագեսցուք ։
Դպիրքն ։ Առաջի քո Տէր ։
Քահանայն ։ Խաղաղութեամբ քով Քրիստոս ։
Սարկաւագն ։ Օրհնեա տէր ։
Քահանայն ։ Տէր Աստուած օրհնեսցէ ։

Սարկաւագն ։

Մի ոք յերախայից, մի ոք 'ի թերահաւատից, և մի ոք յապաշխարողաց, և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդն ։

Դպիրքն ։

Մարմին տէրունական, և արիւն փրկչական կայ առաջի։ Երկնային զօրութիւնքն յաներևոյթս երգեն, և ասեն անհանգիստ բարբառով, սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց ։

Սարկաւագն ։

Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգևորս ։

Եւ դպիրքն եղանակեն զսրբասացութիւն, ըստ խորհրդոյ աւուրն ։

Նոյն.

## Ծննդեան, Ա. Հեւտեաց, Ա. Ֆածնի:

Բազմութիւնք հրեշտակաց, և զօրաց երկնաւորաց, իջեալ 'ի յերկնից ընդ միածին թագաւորին: Որք երգէին և ասէին, սա է որդին Այ: Ամենեքեան ասասցուք, ուրախ լերուք երկինք, և ցնծասցեն հիմունք աշխարհի. զի Ածն Նախաէականն 'ի յերկրի երևեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր:

## Մեծի Հինգշաբաթի:

Որ վերամբառնիս 'ի կառս հրանիւթս քառակերպեանս անճառելի բանդ Այ: Այսօր իջեալ 'ի յերկնայնոցն վն քո արարածոցս, յանձն առեր բաղձիլ ընդ աշակերտս: Եւ սերոբէքն և քերոբէքն հիացեալ զարմանային: Եւ պետութիւնք վերին զօրացն, սքանչացեալ աղաղակէին ասելով սբ, սբ, սբ տր զօրութեանց:

## Յինանցն:

Ով է որպէս տր ած մեր, խաչեցաւ վն մեր, թաղեցաւ, և յարեաւ հաւատարիմ եղև աշխարհի, և համբարձաւ փառօք: Եկայք ժողովուրդք զօրհնութիւս ընդ հրեշտակս երգեսցուք աստուծոյ ասելով. սբ: սբ, սբ ես տր ած մեր:

## Կիրակէի. Եկեղեցւոյ. Հրեշտակաց:

Հրեշտակային կարգաւորութիւ լցեր ած զքո սբ զեկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակաց կային առաջի քո, և բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեին զքեզ տր:

Եւ 'ի մարդկանէ հաճեցար ընդունել զօրհնութիւս, ձայնիւ խորհրդականաւ, սբ, սբ, սբ տր զօրութեանց:

## Մարտիրոսաց:

Սրբութիւն սրբոց մեծ ես, և ահաւոր, և զինուորութիւնք հրեշտակաց օրհնեն զքեզ, և ասեն: Փառք 'ի բարձունս Այ, և յերկիր խաղաղութիւն:

## Պահոց. Ննջեցելոց:

Վն յիշատակի հանգուցելոցն ընկալ հայր սբ մարդասէր զպատարագս, և համբերեա՛ զհոգիս նց 'ի թիւ սրբոց քոց յարքայութեան երկնից: Մանաւանդ զի հաւատով մատուցուք զպատարագս հաշտեսցի ածութիւն և հանգուսցէ զհոգիս նոցա:

## Մարգարէից. Առաքելոց. Հայրապետաց:

Ամենակալ ես տր զօրութեանց, որ թագաւորդ ես յաւիտենից, որ նստիդ յերկնից 'ի յերկինս, և լոյս ծագես յարարածս քո: Որ խոնարհութիւ իջեր 'ի յերկիր, քեզ պատարագս մատուցանեմք: Եւ սբ զանունդ քո փառաւորեմք, տր որ պսակիչդ ես քոց սրբոց առաքելոց: Վն զի սքա են մեզ բարեխօս տր ամենակալ 'ի քում արքայութեանդ:

Եւ եթէ հանդիսաւոր օր լինի, և զսբ խորհուրդն վերաբերել կամիցիս, այս է արարողութիւն:

Յորժամ քահանայն ասէ: Տր ած օրհնեսցէ զամենեսեանդ:

Սար-

Սարկաւագն ։ Սաղմոս ասասցէք տն մյ ,

Եւ Դպիրքն երգեն զրբաստացութին ըստ խորհրդոյ աւուրն կանգնեալ ։

Սարկաւագն ։ Մ՛ի ոք յերախայից ։
Դպիրքն ։ Մարմին տէրունական ։

Եւ դան խնկարկելով ՚ի մէջ խորհրդանոցն ։

Սարկաւագն ։ Յարեւու եհար զխորան իւր , և ինքն ո՛չ փեսայ , զի ելանէ յաւագաստէ իւրմէ ։
Դպիրքն ։ Եւ ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր ։
Սարկաւագն ։ Որք ըստ քրօբէիցն ։
Դպիրքն ։ Խորհրդաբար կերպարանիմք ։

Եւ դան յարեւելից կողմն ։

Սարկաւագն ։ Ճանապարհ արարէք այնմիկ , որ նստի յերկնից երկինս ընդ արեւելս ։
Դպիրքն ։ Եւ կենդանարար երրորդութեն զերեքսրբեան օրհնութիւս մատուցանեմք ։

Եւ դան ՚ի հարաւակողմն ։

Սարկաւագն ։ Աճ ՚ի հարաւոյ եկեսցէ , և սուրբն ՚ի փառան լեռնէ ։
Դպիրքն ։ Զամ՛ զկենցաղականս ՚ի բաց դնելով զգործս ։

Եւ դան յառաջեան խորանին , և բարձող ահաւոր խորհրդոյն ասասցէ համբարձութե ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր , համբարձցին դրունք յաւիտենից , և մտցէ Թագաւոր փառաց ։

Եւ պատարագօղն խնկարկէ , և հարցանէ ։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց , տէր հզօր զօրութե իւրով , տէր կարող ՚ի պատերազմի ։
Դպիրքն ։ Որպէս զի զԹագաւորն ամենեցուն ընդունիցիմք ։
Երէցն ։ Համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից , և մտցէ Թագաւոր փառաց ։
Քահանայն ։ Ո՞վ է սա Թագաւոր փառաց , և տէր զօրութեանց ։
Դպիրքն ։ Եւ զհրեշտակացն հանդիսապէս ընծայեալ բերեմք զկարգ ։
Երէցն ։ Սա ինքն է Թագաւոր փառաց ։

Եւ պատարագօղն երկրպագէ ահիւեղութե , և առնու ՚ի ձեռաց սարկաւագին , և խաչանիշէ * ՚ի վր ժողովրդեանն ասելով ։

Օրհնեալ եկեալ անուամբ տն ։

Դպիրքն ։ Ալէլուիա ։

Այս վերոյգրեալ վերաբերութիւս յատկապէս պատշաճի աւուրբաղան խորհուրդն մարմնոյ և արեանն քի ։ Սատի պարտէ առնել վասն ապարօղութե զկնի սրբագնագործութեան , և ոչ աստ։ Բայց որք կամին առնել աստ ըստ սովորութե , նոքա պարտին իմանալ և ծանուցանել ժողովրդեանն , թէ աստ ընծայքն են դեռ ևս լոկ հաց և գինի, զի տակաւին ոչէն սրբագնագործեցեալք ։ Վն որոյ ոչ են դեռ ևս երկրպագելիք , այլ միայն պատուելիք ։

Այլ և որք աստ կամին առնել զարարողութիւս զայս , ոչ պարտին ընծայիւքն խա-

խաչանիշել ՚ի վե՛ր ժողովրդեան, և ոչ երկիրպագանել զի դեւ և ոչ է աշաւոր խորհուրդ, և ոչ թագաւոր փառաց:

Որք ամենեքեան պարտին լինել յետ սրբազնագործութե, այսինքն, յետ Նուէք կերէքին, և Նրբէքը ՚ի սմանէ՞ին:

Սարկաւագն:

Եւ ես հաւատով եւրքութե կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս տն ահիւ: Մե՛ խղճիւ և դայթակղութեամբ, մի՛ նենգութե, խորամանկութե, մի՛ պատրանօք և խաբէութե, մի՛ երկմտութե, և մի՛ թերահաւատութե: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի և առատացեալ ամ գործովք բարութե: Կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս տն, և գտցուք զողորմութե շնորհս: Յաւուր յայտնութե և ՚ի միւսանգամ գալստեան տեառն մերոյ և փրկչին յի քի: Կեցուսցէ և ողորմեսցի:
Դպիրքն: Կեցո՛ տր, և ողորմեա՛:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Շնորհօք և մարդասիրու:
Խաղաղութի ընդ ամենեսեան:
Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում.
Սարկաւագն: Այ երկրպագեսցուք:
Դպիրքն: Առաջի քո տր:

Սարկաւագն:

Ողջոյն տուք միմեանց, ՚ի համբոյր սրբութե, և որք ոչ էք կարօղք հաղորդիլ ածային խորհրդոյս, առ դրունս ելէք, և աղօթեցէք:

Դպիրքն:

Քս ՚ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն ած աստ բազմեցաւ:
Ձայն խաղաղութե հնչեցաւ, մբ ողջունիս հրաման տուաւ, թշնամութին հեռացաւ, սէրն ընդհանուրս սփռեցաւ:
Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն տուք օրհնութե ՚ի մի բերան, միասնական ածութեն, որում սրօբէքն են սրբաբան:

Ամենք և զայս ասեն ՚ի հանդիսի տօնի:

Սարկաւագն:

Որք հաւատով կայք յանդիման սուրբ սեղանոյս արքայական, տեսջիք բզմեալ զքս արքայն, և շուրջ պատեալ զօրք վերնական:

Դպիրքն:

Վերհամբառնամք զաչս ունելով, և պաղատիմք զայս ասելով, զմեղս մեր մի՛ յիշեսցես, այլ զթութե քո քաւեսցես:
Ընդ հրեշտակացն օրհնեմք զքեզ, և ընդ սրբոց տր փառք քեզ:

Սարկաւագն:

Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք, և նայեցարուք զգուշութե:
Դպիրքն: Առ քեզ ած:
Սարկաւագն: Պատարագ քս մատչի գառն այ:
Դպիրքն: Ողորմութի, և խաղաղութի, և պատարագ օրհնութե:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:

Քահանայն : Շնորհք սէր, և ածայ :
Դպիրքն : Եւ ընդ հոգւոյդ քում :

Սարկաւագն :

Զդրունս, զդրունս ամ իմաստութբ և զգուշութբ :
Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր ածային երկիւղիւ :
Դպիրքն : Ունիմք առ քեզ տր ամենակալ :
Սարկաւագն : Եւ գոհացարուք զտէ բոլոր սրտիւ :
Դպիրքն : Արժան և իրաւ :
Սարկաւագն : Օրհնեա տէր :
Քահանայն : Եւ ընդ սերոբէին և :

Իսկ 'ի հանդիսի աւուրն ոմանք զկնի, Արժան և իրաւէն . ասեն զայս :

Սարկաւագն :

Ի զատոյդ փրկութե, որ միշտ ընդ ամենայն տեղիս գոհութե մատուցանեմք քեզ քս : Որով և զհրաշալի զյարութիւ քո գովեն զօրութիւք, սարսին սերոբէք, Եդոցան քերոբէքն, և իշխանութիւք վերին պետութեցն պարառեալ ձայնիւ եղանակեն և ասեն :

Դպիրք :

Սբ, սբ, սբ տր զօրութեց, լի են երկինք և երկիր փառօք քո, օրհնութի 'ի բարձունս :
Օրհնեալ, որ եկիր, և գալոց ես անուամբ տեառն, ովսաննայ 'ի բարձունս :
Սարկաւագն : Օրհնեա տէր :
Քահանայն : Առէք կերէք :
Դպիրքն : Ամէն :
Սարկաւագն : Օրհնեա տէր :
Քահանայն : Արբէք 'ի սմանէ :

Դպիրքն :

Ամէն : Հայր երկնաւոր, որ զորդիդ քո ետուր 'ի մահ վասն մեր, պարտապան պարտեաց մերոց : Հեղմամբ արեան նորա, աղաչեմք զքեզ ողորմեա քո բանաւոր հօտիս :
Սարկաւագն : Օրհնեա տէր :
Քահանայն : Եւ զքոյս 'ի քոյոց :

Դպիրքն :

Յամի օրհնեալ ես տր, օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքեն, աղաչեմք զքեզ տր ած մեր :
Սարկաւագն : Օրհնեա տէր :
Քահանայն : Խաղաղութի ընդ ամե :
Դպիրքն : Եւ ընդ հոգւոյդ քում :
Սարկաւագն : Այ երկրպագեսցուք :
Դպիրքն : Առաջի քո տր :

Որդի այ, որ պատարագեալ հօր 'ի հաշտութի, հաց կենաց բաշխիս 'ի մեզ, հեղմամբ արեան քո սբ, աղաչեմք զքեզ ողորմեա քո փրկեալ հօտի :
Սարկաւագն : Օրհնեա տէր :
Քահանայն : Որպէս զի եղիցի սա :

Դպիրքն :

Ոգի այ, որ զիտակցի քո զխորհուրդ իջեալ 'ի յերկնից կատարես 'ի ձեռս մեր, հեղմամբ արեան սորա, աղաչեմք զքեզ հանգո զհոգիս մեր ննջեցելոցն :
Սարկաւագն : Օրհնեա տէր :

Քահանայն ։ Ընդ սրս եւ մեզ այց ։
Դպիրքն ։ Յիշեա՛ տր եւ ողորմեա՛ ։
Քահանայն ։ Ծածնին սրբոց կու ։
Դպիրքն ։ Յիշեա՛ տր եւ ողորմեա՛ ։

Սարկաւագն 'ի յաջակողմն սեղանոյն ձեռնամած ասասցէ ։

Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, եւ ամ հայրապետաց սրբոց ։ Առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, եւ ամենայն սրբոց ։ Եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս, աղաչեմք ։
Դպիրքն ։ Յիշեա՛ տր եւ ողորմեա՛ ։

Կիրակէից յարութեան ասա զայս ։

Օրհնեալ, գովեալ, եւ փառաւորեալ հրաշալի, եւ ածազարդ յարութեան քո երկրպագանեմք ։
Դպիրքն ։ Փառք յարութեան քո տր ։

Ի տօնի սրբոցն զայս ասա ։

Սարկաւագն ։ Սուրբ եւ ածահաճոյ, մարգարէին, կամ հայրապետին, կամ առաքելոյն, կամ մարտիրոսին, Նշան անուն ։ որոյ այսօր զյիշատակն կատարեցաք ։ Եղիցի յիշատակ 'ի սբ պատարագս աղաչեմք ։
Դպիրքն ։ Յիշեա՛ տր եւ ողորմեա՛ ։

Սարկաւագն ։

Նախնորդացն մերոց, եւ առաջին լուսաւորչացն սրբոց. Թադէոսի, եւ Բարդուղիմէոսի առաքելոցն, եւ Գրիգորի լուսաւորչին, Արիստակէսի, Վրթանիսի, Յուսկան, եւ Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիէլի, եւ Խադայ, Մեսրոպայ վարդապետին, եւ Գրիգորի Նարեկացւոյն, եւ Ներսիսի կլայեցւոյն ։ Եւ ամենայն սրբոց հովուաց, եւ հովուապետացն հայաստանեայց ։ Եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս, աղաչեմք ։
Դպիրքն ։ Յիշեա՛ տր եւ ողորմեա՛ ։

Սարկաւագն ։

Միաձնացելոց սրբոց, առաքինասէր եւ ածուսոյց կրօնաւորացն, Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Օնոփրեսի, աբբայ Մարկոսի, Սերապիոնի, Նեղոսի, Արսենի, Եւագրի ։ Յոհաննիսեանց, եւ Սիմէոնեանց, սբց Ոսկեանց, եւ Սուքիասանց, եւ ամենայն սրբոց հարց, եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս ։ Եղիցի յիշատակ 'ի սբ պատարագս, աղաչեմք ։
Դպիրքն ։ Յիշեա՛ տր եւ ողորմեա՛ ։

Սարկաւագն ։

Թագաւորաց հաւատացելոց սրբոց, Աբգարու Կոստանդիանոսի, Տրդատայ, եւ Թէոդոսի, եւ ամ սբ եւ բարեպաշտ թագաւորաց, եւ ածասէր իշխանաց ։ Եղիցի յիշատակ 'ի սբ պատարագս, աղաչեմք ։
Դպիրքն ։ Յիշեա՛ տր եւ ողորմեա՛ ։

Սարկաւագն ։

Ընդհանուր ամ հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, եւ ամենայն չափու հասակի հաւատով եւ սրբութբ 'ի քս ննջեցելոց ։ Եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս, աղաչեմք ։
Դպիրքն ։ Յիշեա՛ տր եւ ողորմեա՛ ։
Սարկաւագն ։ Օրհնեա՛ տէր ։
Քահանայն ։ Եւ առաւել զորբազան Փառն մեր ։

Սարկաւագն:

Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ տէր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս, որ ՛ի վերայ սրբոյ սեղանոյս: Զի զսա՛ մեզ ՛ի սրբութիւն կենդանութեան պարգևեսցես: Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն, և զղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ, և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւս առաւել սրբազան Պապին մերոյ տեառն, Նյս անուն. և պատուական Պատրիարգին մերոյ. Կամ, Արքեպիսկոպոսին, կամ. Եպիսկոպոսին, տեառն. Նյս Անուն: Եւ քահանայիս, որ զպատարագս մատուցանէ:

Իսկ Կաթուղիկոսն կամ եպիսկոպոսն հայոց եթէ իցէ հերետիկոս կամ հերձուածօղ, ոչ երբէք և ոչ ուրեք անուանիցի: Այլ եթէ իցէ ուղղափառ անուանեսցի միայն՛ ի յիւրում թեմի և վիճակի, և ոչ արտաքոյ նորին:

Եւ վասն զօրութեան և յաղթութեան թագաւորաց քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ րաբունապետացն մերոց, և շինողաց սուրբ եկեղեցւոյս, և որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: Ազատութիւն եղբարց մերոց գերելոց, և շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ հաւատով և սրբութեամբ ՛ի Քրիստոս կատարելոցն: Եղիցի յիշատակ ՛ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպիրքն: Ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն:

Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:

Քահանայն: Եւ եղիցի ողորմու:

Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում:

Եւ սարկաւագն քարոզէ ՛ի թեւ:

Եւ ես խոստովանութեամբ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր ողորմեա՛:

Սարկաւագն: Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք, ևս առաւելապէս, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր ողորմեա՛:

Սարկաւագն: Վասն մատուցանողաց սուրբ և Աստուածային պատարագիս, որ ՛ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր ողորմեա՛:

Սարկաւագն: Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա՛ ՛ի սուրբ յերկնային և յիմանալի իւր մատուցարանն, և զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգևս: Ոգւոյն սրբոյ. զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր ողորմեա՛:

Սարկաւագն: Ընկալ, կեցո, և ողորմեա՛, և պահեա՛ զմեզ Տէր քոյին շնորհիւդ:

Դպիրքն: Կեցո Տէր և ողորմեա՛:

Սարկաւագն: Զամենասրբուհի զԱստուածածինն, զմիշտ կոյսն Մարիամ, համօրէն ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր ողորմեա՛:

Սարկաւագն: Եւ ես և վասն միաբանութեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր ողորմեա՛:

Սարկաւագն: Զանձինս մեր, և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպիրքն: Քեզ Տէր յանձն եղիցուք:

Սարկաւագն: Ողորմեա մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում: Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպիրքն: Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:

Սար-

Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Եւ տուր մեզ համարձ:

Դպիրքն:

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցի կամք քո, որպէս յերկինս և յերկրի, զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա՛ ՚ի չարէ:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Զի քո է արքայութիւն:
Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Աստուծոյ երկրպագեսցուք:
Դպիրքն: Առաջի քո տէր:

Քահանայն խոնարհի, և ամենայն ժողովուրդն խոնարհին ՚ի վայր: Եւ սարկաւագն ձայնէ:

Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Քեւ Յիսուսիւ տէրբ մերով:

Եւ սարկաւագն բարձր ձայնէ:

Պռօսխումէ:
Քահանայն: Ի սրբութիւն սրբոց:
Դպիրքն: Միայն սուրբ, միայն տէր յիսուս քրիստոս, ՚ի փառս Աստուծոյ հօր. Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Օրհնեալ Հայր սուրբ:
Դպիրքն: Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Օրհնեալ որդին սուրբ:
Դպիրքն: Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Օրհնեալ Հոգին սուրբ:
Դպիրքն: Ամէն:

Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Օրհնութիւն և փառք հօր և:
Դպիրքն: Ամէն: Հայր սուրբ, Որդի սուրբ, Հոգի սուրբ: Օրհնութիւն հօր և որդւոյ և սրբոյ Հոգւոյն: Այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Ի սուրբ ՚ի սուրբ պատուական:

Եւ խաչակնքէ քահանայն սկիհն ՚ի վերայ ժողովրդեանն, և քարշեն զվարագոյրն: Եւ քարոզէ սարկաւագն բարձր:

Սաղմոս ասասցէք Աստուծոյ մերոյ դպիրք ձայնիւ քաղցրութեան զերգս հոգևորս: Զի սմա վայելեն սաղմոսք, և օրհնութիւնք, ալէլուք և երգք հոգևորք: Պաշտօնեայք հանդերձ երգով սաղմոս ասասցէք, և զտէր յերկինս օրհնեցէք:

Դպիրքն եղանակեն:

Քրիստոս պատարագեալ բաշխի ՚ի մէջ մերում. Ալէլուիա:
Զմարմին իւր տայ մեզ կերակուր. և սուրբ զարիւն իւր ցօղէ ի մեզ. Ալէլուիա:
Մատիք առ տէր, և առէք զլոյս. Ալէլուիա:
Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր. Ալէլուիա:
Օրհնեցէք զտէր յերկինս. Ալէլուիա:
Օրհնեցէք զնա ՚ի բարձունս. Ալէլուիա:
Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. Ալէլուիա:
Օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա. Ալէլուիա:

Եւ կու–

## Երկուշաբթի:

Լոյս ճշմարիտ և ճառագայթ հօր, ծագումն էակից, բան և ծնունդ: Որ կանգնեցեր յեօթանց սեանց զեկեղեցի սբ, ածեալ 'ի սպանդ զեզն պարարակ: Շնորհեա մեզ կերակրել յիմաստութենէ սեղանոյ քում: Ողորմեա:

## Երեքշաբթի:

Հաց կենաց և անմահութեն, ճաշակ սբ և անճառ, սոսկալի խորհուրդ: Որ 'ի յերկնից իջեր կենդանութեն մարդկան. կենդանի և կենդանարար: Պարգևեա ճաշակելոյս զքաղցրութեն քում ճաշակումն: Ողորմեա:

## Չորեքշաբթի:

Դուռն երկնից, և ճանապարհ արքայութեն, ատ̄ երկնի, 'ի յերկնայնոցն օրհնեալ դասուց: Որ զմարմին քո, և զարիւնդ անապական բաշխեցեր առաքելոցդ: Մաքրեա զմեզ հաղորդել սրբութեն քում խորհրդոյ: Ողորմեա:

## Հինգշաբթի:

Բան հօր և քահանայապետ սբ, յանմարմնոցն գովեալ 'ի բարձունս: Որ 'ի վր խաչին պատարագեալ մարմնով հեղեր զարիւնդ 'ի փրկութեն: Սրբեա զմեղս մեր կենարար և փրկական քաւիչ քո արեամբդ: Ողորմեա:

## Ուրբաթի:

Իւղ հոգևոր եգլուխս անկեան օծեալ, բարերանեալ 'ի հրեշտակաց: Որ 'ի խաչին բացեր զկողահոս աղբիւրդ, զանմահութեն ցօղեալ մեղաւորաց: Արբո՛ և մեզ ծարաւեցս զբաժակ քո փրկութեան: Ողորմեա:

## Շաբաթ:

Գառն ոյ զենեալ միշտ, և կենդանի, անմեղ եկեալ 'ի պատարագս: Որ 'ի հաշտութեն հօր պատարագեալ բաւական զմեղս աշխարհի, յանմահից զօրաց փառաւորեալ: Յիշեա զհոգիս հաւատով 'ի քեզ ննջեցելոցն մերոց: Ողորմեա:

Եւ քարշեն զվարագոյրն յետ: Եւ Սարկաւագն քարոզէ բարձր ձայնիւ:

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք:

Եւ Ժողովուրդն ասեն բարձր ձայնիւ:

Դպիրքն: Տր մեր և Ած մեր երևեցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տն:

Քահանայն: Կեցո՛ Տր զժողովուրդս:

Դարձեալ քարշեն զվարագոյրն:

## Եւ Գովերքն երգեն.

Լցաք ՚ի բարութենէ քոյ Տ̃ր, ձաշակելով զմարմին քո, և զարիւն. Փառք ՚ի բարձունս կերակրողիդ զմեզ:
Որ հանապազ կերակրես զմեզ, տուաքեա՛ ՚ի մեզ զհոգևոր քո զօրհնութի̃.
Փառք ՚ի բարձունս կերակրողիդ զմեզ:

## Սարկաւագն:

Եւ ևս խաղաղութե̃ զՏ̃ր աղաչեսցուք:
Եւ ևս հաւատով ընկալեալք յա̃ծայինն, սբ̃ յերկնայինն, յանմահ, յանարատ, և յանապական խորհրդոյս զՏ̃նէ գոհացարուք:

## Գովերքն:

Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմեզ, յանմահական սեղանոյ քո:

## Գովերքն:

Բաշխելով զմարմին և զարիւնդ ՚ի փրկութի̃ աշխարհի, և կեանք անձանց մերոց:

Իսկ աստանօր Գովերքն եղանակեն տաղս խորհրդաւորս, մինչև քահանայն կատարեսցէ զկարգ աղօթիցն:

Եւ յորժամ հաղորդին արժանաւորքն. Գովերքն երգեն զերգս:

## Տաղ բաշխման:

Մայր հաւատոյ սուրբ հարսնարան.
Եւ առագաստ վերադրական.
Տուն փեսայիդ անմահական.
Որ զարդարեաց զքեզ անվախճան:
Երկրորդ երկին դու հրաշական.
Փառաց ՚ի փառս բարձրական.
Որ զմեզ ծնանիս լուսոյ նման.
Աւազանաւն որդեգրական:
Բաշխես զհացըդ մաքրական.
Զարիւն ըմպել սոսկական.
Ձգես ՚ի վեր գերաստիճան.
Իմանալեացըն զուգական:
Եկա՛յք որդեք նոր սիոնի.
Մատէք առ Տ̃ր մեր սրբութե̃.
Ճաշակեցէ՛ք այլև տեսէ՛ք.
Զի քաղցր է Տ̃ր մեր զօրութե̃:
Նա բաժանեաց զյորդանան.
Դու զծով մեղաց աշխարհական.
Նմա Յեսու մեծ զօրական.
Զքեզ Տ̃ր յն̃ հօր էական:
Ձինն օրինակ քեզ և նման.
Դու խորանին վերադրական.
Նա խորտակեաց զդրունս անդամանդ.
Դու դժոխոց զդրունս ՚ի հիմանց:
Ձագս այս, մարմին է քի̃.
Բաժակս արիւն նորոյ ուխտի.
Ծածկեալ խորհուրդն մեծ յայտնի.
Ած̃ ՚ի սմա մեզ տեսանի:
Սա է քն̃ բանն Ած̃.
Որ ընդ աջմէ հօրըն բազմի.
Եւ աստ ՚ի մեզ պատարագի.
Բառնայ զմեղըս աշխարհի:
Այն որ օրհնեալ է յաւիտեան.
Հարբ և Որդւովըն միաբան.
Այժմ և յաւէտ, և յապագայն.
Եւ անսպառ միշտ յաւիտեան:

## Տաղ ծննդեան, և Յայտնութեան։

ՈՎ զարմանալի, խորհուրդս այս մեծ յայտնեալ.
Արարիչն ած 'ի յորդանան եկեալ։
Կամէր մկրտիլ 'ի ծառայէն իւրմէ ·
Ջաւնոյր կարապետ զմկրտիլն 'ի յանձն։
Յորդանան լռեալ փախստական դառնայր ·
Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր։
Գետ մի զարհուրիր, քո արարիչն եմ ես ·
Եկեալ մկրտիմ, և լուանամ զմեղս։
Յո՜ յառաջեաց ածութեան 'ի ջուրս ·
Զանդերձ Յոհաննու յո՜ 'ի գետն եմուտ։
Երկինք պատառեալ, ձայն 'ի վերուստ իջեալ ·
Ձայն հօր 'ի բարձանց, որ վկայեաց որդւոյ։
Դա է իմ որդի ընդ որ հաճեցայ ·
Դմա լուարուք որդիք մարդկան ձայնէր։
Սբ Ոգին իջեալ աղաւնակերպ տեսլեամբ ·
Յայտնեալ ցուցանէր զխաւակից հօր զորդի։
Արդ օրհնեալ է հայր, և համագոյ որդին ·
Ոգւոյն Ճշմարտի, փառք յաւիտեանս ·
Ամէն։

## Տաղ Յարութեան։

ԳՈչէր հրեշտակն 'ի վիմին ·
Վս յարութեանն յի ·
Կանայք դուք զի՞ զարհուրիք ·
Լալով խնդրէք զկենդանին։
Բամից էից արարիչն ·
Ազգի մարդկան ապաւէնն ·
Նա 'ի խաչին բարձրացաւ ·
Անմահն ած մահացաւ։
Ի տապանի դնեցաւ ·
Արթուն բնութեն ըստացաւ ·
Ած և մարդ ծանուցաւ ·
Մեզ փրկութեն յայտնեցաւ։
Գոչեալ գնդին Պետրոսեան ·
Տալ աւետիս յարութեն ·
Գալիլեայ է սահման ·
Անդէն եդեալ իր պայման։
Որ 'ի յաթոռ հօր բազմեալ ·
Ի հող մահու խոնարհեալ ·
Այսօր փառօք յարուցեալ ·
Մեզ կեանս անմահ պատրաստեալ։
Բամից դասուն որբանեալ ·
Առաքելոցն գովեալ ·
Ի գալիլեայ փութացեալ ·
Զյս տեսլն յարուցեալ։

Եւ 'ի վերջ տաղիս ասէ Մարկաւագն։

Օրհնեա տէր։
Քահանայն։ Որ օրհնես զայնոս։
Դպիրքն։ Եղիցի անուն տն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Երեք անգամ ասէ։

Քահանայն։ Կատարումն օրինաց և։
Դպիրքն։ Օրհնեցից զտր յամ ժամ, յամ ժամ օրհնութի նր 'ի բերան իմ։
Քահանայն։ Օրհնեալք եղերուք։

Եւ 'ի բաշխելն զնշխարս առ ժողովուրդն երգեն զսաղմոս 33· Օրհնեցից զտր յամ. մինչև 'ի վերջն։ Եւ 'ի վերջն ասեն · Փառք հօր և որդւոյ, և հոգւոյն սրբոյ · Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։
Եւ ասեն։ Ալէլուիա Օրթի։
Քահանայն։ Սրբոյ աւետարանիս, որ ըստ Յոհաննու։

Ցետ յարութեն որք մերովլ յեւ քեւ ։
Քահանայն ։ Ե՛ւ լերև ճաշեցին ։
Դպիրքն ։ Փառք քեզ տր ած մեր ։

Սարկաւագն ։

Մեծ խաչիւն աղաչեսցուք զտր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեն իւրոյ ։ Ա. մենակալ տր ած մեր կեցո և ողորմեա ։ Տր ողորմեա. Տր ողորմեա. Տր ողորմեա ։

Քահանայն ։

ՊԱհպանեա զմեզ քս ած մեր, ընդ հովանեաւ սբ և պատուական խաչի քո ՚ի խաղաղութեն ։ Փրկեա յերևելի և յաներևութ թշնամւոյն ։ Ա. րժանաւորեա գոհութբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սբ Հգւոյդ ։ Ա. յժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ Ա. մէն ։

Եւ արձակեն խաղաղութբ ։

Վ. Ե Ր Ջ.

# CORRECTIONES OFFICII DIVINI ARMENORUM.

## ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԺԱ-ՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ։

Ի՛ն ժամագրքեան, որոյ մակագիրն է այսպէս։

Աղօթամատոյց և ժամագիրք. ՚Ի հայրապետութե տեառն Յակոբայ կաթուղիկոսի մեր էջմիածնի։

---

Յամստէլօտամում։

---

Ի թուոյն քի. 1667. Իսկ հայոց 1116. փետրվարի ամսոյ քսան։

Սրբագրելիք են այսոքիկ։

ա. Ի յէջն. 17. ՚ի տողն. 17. ՚ի մէջ Առաւօտ լուսոյն. ուր ասի. Բղխումն ՚ի հօրէ. բղխեալ։
Աւելագրեցի. և յորդւոյ. և ասիցի այսպէս։
Բղխումն ՚ի հօրէ և յորդւոյ. բղխեալ. և այլն ըստ կարգին։

բ. Ի յէջն 82. ՚ի մէջ Ասասցուք ամենեքեանքն. յետ տողին 22. Որ ասի, Ս ՟ ամ ոք և ուղղափառ եպիսկոպոսաց զՏր աղաչեսցուք. Աւելագրեցի։
Ս ՟ սրբազան փափին մերոյ տեառն. Այս Անուն. զՏր աղաչեսցուք։
Ս ՟ Պատրիարգին մերոյ տեառն, Այս Անուն։ Կամ. Արքեպիսկոպոսին մերոյ տեառն. Այս Անուն։ Կամ. Եպիսկոպոսին մերոյ տեառն. Այս Անուն. զՏր աղաչեսցուք։
Ս ՟ վարդապետաց, քահանայից, և այլն. ըստ կարգին։
գ. Այսպէս ասիցի և ս Ներեկոյեան ժամուն, և Ճաշու ժամուն, և պատարագին. 178. և 205.
դ. Ի այց կաթուղիկոսն հայոց կամ եպիսկոպոսն. եթէ լցէ ուղղափառ անուանիցի ըն խորուս մինակի և թեմի։ Իսկ եթէ լցէ հերետիկոս կամ հերձուածող, ոչ ասիցէք և ոչ երբէք անուանիցի։
ե. Ի յէջն 93. ՚ի տողն, 14. Իսկ ՚ի յէջն 207. ՚ի տողն. 21. հետ ոք ամէն մի ասիցի. Որ յայտնեցար վս մեր։ Կամ. Որ խաչեցար վս մեր։ կամ, որ յարեար ՚ի մեռելոց։ կամ, որ համբարձար փառօք առ հայր։ կամ, որ եկիր և համդեար յառաքեալս։ կամ, որ եկիր ՚ի փոխումն մօր քո և կուսի. կամ, որ եկիր և գալոց ես, և այլք այսպիսիք թէ լցեն. Այլ ասիցի այսպէս։ Որ մի, որ և հզօր, որ և անմահ, ողորմեա մեզ։
զ. Այսպէս ասիցի և ըն ժամու Ճաշուն, և ըն պատարագում, և Ներեկոյին։
է. Ի յէջն. 114. ՚ի տողն. 21. ՚ի մէջ մաղթանքին. որ սկսանի վս խաչի քո պատուականի պաշտպանութե քո առ մեզ ամմի ասիցի։ Սրբոյն Յակոբայ հայրապետին, և Մարտուգէի Ճգնաւորին։ Այլ ասիցի, այսպէս։ Բարեխօսութե և աղօթիւք սրբոցն, կամ, սրբոյն, Այս Անուն։ Ս հայր, կամ. հայրապետի, կամ, կուսի. և այլն. Որոց. կամ, որոյ, այսօր է յիշատակ։ Իսկ այլն ըստ կարգին։

ԺԵ. Ի յէջն 166. 'ի տողն 19. 'ի մէջ ժա-
մամաւն. Ծնածին անհարմանացեալ.
մի՛ ասիցի. անհամարմանացեալ: Այլ ա-
սիցի այսպէս. Ծնածին առն անգիտակ
զբանն. և այլն ըստ կարգին:

ԺԶ. Ի նմին. 'ի տողն. 20. մի՛ ասիցի.
անխմանալին. Այլ ասիցէ այսպէս.
զԾնն անբովանդակելին ծնար: Եւ այլն
ըստ կարգին:

ԺԷ. Ի յէջն. 168. 'ի տողն. 19. Որ՛պ յետ
ածաւէր Թգրին. և այլն. Եւ 'ի յէջն.
177. 'ի տողն. 9. Յաշխարհական 'ի ձա-
կատամարտին. և այլն.

Այսքիկ երկու ժամանակաւքս բոլո-
րովիմբ 'ի բաց բառնիցին, և մի՛ ասի-
ցին: Այլ 'ի տեղի նոցին, եթէ պի-
տոյ լինիցի, ասիցի ժամանաւն: Ի
տաձարի սրբոց: Որ կայ եդեալ 'ի
յէջն. 164. 'ի տողն 19. 'ի մէջ ժա-
մանակ:

ԺԸ. Ի յէջն 181. 'ի տողն 3. 'ի մէջ հա-
ւատամքին. մի՛ ասիցի: 'ի հայրն ամե-
նակալ: Այլ ասիցէ. 'ի հայրն ամենա-
կալ: և այլն ըստ կարգին:

Ի նմին 'ի տողն, 6. մի՛ ասիցի. ծնեալ
յա՛յ հօրէ միածին, այսինքն յէութէ
հօր: Այլ ասիցի: ծնեցեալ յա՛յ հօրէ
միածին, նախ քան զա՛մ յաւիտեանս: և
այլն ըստ կարգին:

Ի նմին. 'ի տողն. 10. մի՛ ասիցի. Նոյն
ինքն 'ի բնութէ հօր. Այլ ասիցի.
Նոյն ինքն համագոյակից հօր: և այլն
ըստ կարգին:

Ի նմին. 'ի տողն. 17. մի՛ ասիցի. հոգւով
սրբով: Որով էառ զմարմին, զհոգի, և
զմիտս. Այլ ասիցի: Ոգւով սրբով.
Որով էառ զմարմին զհոգի, և զմիտ.
և այլն ըստ կարգին:

Ի նմին. 'ի տողն. 20. մի՛ ասիցի. չար-
չարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ
աւուր յարուցեալ: Այլ ասիցի. չար-
չարեցեալ, խաչեցեալ, թաղեցեալ,
յերրորդ աւուր յարեալ: և այլն ըստ
կարգին:

ԺԹ. Ի յէջն. 182. 'ի տողն. 4. 'ի մէջ
հաւատամքին: Աւագրիցի: 'ի հօրէ
և յորդւոյ բղխի: Եւ ասիցի այսպէս:
Խոստաման և 'ի ս՛բ Ոգին, յանեղն և
'ի կատարեալն. Որ 'ի հօրէ և յորդւոյ
բղխի, որ խօսեցաւ: և այլն ըստ կար-
գին:

Ի նմին. 'ի տողն. 7. մի՛ ասիցի, զաւա-
քեալսն: Այլ ասիցի. զաւաքեալն: և
այլն ըստ կարգին:

Մ' իշտ և հանապազ թէ 'ի ժամն թէ
'ի պատարագն, հաւատամքն, այսպէս
ասիցի:

Ի. Ի յէջն. 184. 'ի տողն. 14. 'ի մէջ
աղօթքին, որ սկսանի. Տէր մեր և փրկիչ
յս քս. մի՛ ասիցի. զպարգևս հոգւոյդ
սրբոյ երանելի առաքելոցն: Այլ ասիցի.
զպարգևս Ոգւոյդ սրբոյ երանեցեալ
առաքելոցն. և այլն ըստ կարգին:

ԻԱ. Ա՛մ որ պարտի գիտել, թէ երկու
անուանքս այսքիկ. Հոգի, և Ոգի,
զանազանին 'ի միմեանց, զի հոգին նշա-
նակէ զայն անմարմին գոյութիւն ստեղ-
ծական, որ ունի բնականապէս զպա-
հանջողութի միաւորիլ ընդ մարմնոյ,
և է գոյացական կերպ նորին, որպիսի
է հոգին բանական, և այլք:

Իսկ Ոգին նշանակէ զայն գոյութիւն
անմարմին, թէ անստեղծ, և թէ ստեղ-
ծական, որ ոչ ունի բնականապէս զպա-
հանջողութի միաւորիլ ընդ մարմնոյ,
ուստի և ոչ կարէ լինիլ գոյացական
կերպ նորին, որպիսի է երրորդ անձն
այն ա՛ծային, 'ի հօրէ և յորդւոյ բղխե-
ցեալն, որ կոչի Ոգի ս՛բ, այլ ոչ հոգի
ս՛բ: Որպիսիք են և հրեշտակք, և
դևք. որք են անմարմինք գոյացութիւնք
ստեղծականք, որք կոչին Ոգիք, այլ ոչ
հոգիք. զի ոչ ունին զբնական պահան-
ջողութի միաւորիլ ընդ մարմնոյ:

Ա՛մ որոյ ոչ ուրեք և ոչ երբեք պարտէ
գրել կամ ասել զհոգւանէ հոգի, այլ
Ոգի. և ուրուրեք յանհոգութէ գաւա-
նիցին գոլ գրեցեալք պարտին սրբագրիլ
զի ըստ ա՛մի Ճշմարտութեան. ծանիցի:

Եւ

ԵՒ մանաւանդ յաղագս Հոգւոյն սրբոյ․ որ 'ի լատինաց կոչի Սանքթուս սփիր-ըիթուս․ և 'ի Յունաց կոչի Ագիոս փնեւմա․ իսկ Հոգւոյն լատիներէն ասի Սփիրիտ․ և յունարէն ասի, փսիքէ․ Սու-րբ և հայերէն Սանքթուս սփիրի-թուսն, կամ Ագիոս փնեւմային, ասի ս̄բ Հոգի: Եւ Սփիրիտին, կամ Փսիքէին, ասի Հոգի․ ըստ որում բարեպէս ասէ մա-քուր եսուրբ հոգին սրբոյն Գրիգորի լուսաւորչին:

Ծե․ Ի յէջն 174․ 'ի տողն․ 23․ 'ի մէջ ժամամուտին․ Տէր որ հիմնեցուցեր․ մի ասեցի, հաւատոյ: Այլ ասացի այսպէս․ 'ի վէ̄ վիմի հաւատոյ, և կարգեցեր, և այլն ըստ կարգին:

Ծզ․ Ի յէջն․109․'ի տողն․19․'ի մէջ Ճա-ռագայթեալ բանն 'ի Հօրէն․ 'ի տունն Շնօղ էէցս համայնից․ մի ասեցի, Բանի: Այլ ասացի այսպէս․ 'ի վէ̄ վէ-մին բանիւ․ ընդ եդեալ․ և այլն ըստ կարգին:

Ծէ․ Եւ որք կամեցին ասել․ զԽոստովա-նիմք և հաւատամք ամենակատար սրտիւն, և այլն․ Ասասցեն այսպէս:

Խոստովանիմք և հաւատամք ա-մենակատար սրտիւ․ Զհայրն ա̄ծ անեղ անծին և անսկիզբն: Այլ և ծնօղ Որդւոյ և բղխօղ Հոգւոյն սրբոյ:

Հաւատամք զբանն ա̄ծ անեղ, ծնե-ցեալ և սկսեցեալ 'ի հօրէ, նախ քան զա̄մ յաւիտեանս, ոչ յետոյ և ոչ կրտ-սեր․ այլ Որքան հայրն հայր, ընդ-նմին և որդին որդի․

Հաւատամք զս̄բ Հոգին անեղ և անժա-մանակ, ոչ ծնեցեալ, այլ բղխեցեալ 'ի հօրէ և յորդւոյ․ Էակից և փառակից հօր և որդւոյ:

Հաւատամք զերրորդութիւն ս̄բ, մի բնութիւն և մի ա̄ծութիւն․ ոչ երեք ա̄ծք, այլ մի ա̄ծ, մի կամ, մի թագաւորութիւն և մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և աներևութից:

Հաւատամք յեկեղեցի ս̄բ, 'ի թողութիւն մեղաց, և 'ի հաղորդութիւն սրբոց:

Հաւատամք զմին յերից անձանց զբանն ա̄ծ ծնեցեալ 'ի հօրէ նախ քան զա̄մ յա-ւիտեանս: Ի ժամանակի իջեալ յա̄ծ-ածին կոյսն Մարիամ, առեալ յարենէ նորա միաւորեաց ընդ իւրում ա̄ծութեան: Ինն ամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին, և եղև ա̄ծ կատա-րեալ, մարդ կատարեալ, հոգւով մտօք և մարմնով 'ի մի անձն և 'ի մի դէմ միա-ւորեցեալ 'ի յերկուս բնութիւնս:

Նոյն մարդացեալ առանց փոփոխման, առանց այլայլութեան, անսերմն յղութեան, և անապական ծնունդ: Որպէս ոչ է սկիզբն ա̄ծութեան նորա, և ոչ վախճան մարդկու-թեան նորա: Զի յս̄ ք̄ս երէկ և այսօր, նոյն և յաւիտեան:

Հայր վկայեալ դա է որդի իմ սիրելի․ Եւ Հոգին ս̄բ աղաւնակերպ իջեալ․ Փորձեցեալ 'ի սատանայէ և յաղթեալ նմա, քարոզեալ մարդկան զփրկութիւն, աշխատեցեալ մարմնով, վաստակեցեալ քաղցեալ, և ծարաւեալ:

Յետոյ եկեալ կամաւ 'ի չարչարանս․ խաչեցեալ և մեռեալ մարմնով, և կեն-դանի ա̄ծութեամբն: Մարմինն դրեցեալ 'ի գերեզմանի միաւորեցեալ ա̄ծութեամբն․ և Հոգին իջեալ 'ի դժոխս անբաժանելի ա̄ծութեամբն: Քարոզեալ հոգւոցն աւե-րեալ զդժոխս, և ազատեալ զհոգիսն: Յետ երից աւուրց յարեալ 'ի մեռելոց, և երևեալ աշակերտացն:

Հաւատամք զտ̄ր մեր յս̄ ք̄ս նովին մար-մնովն համբարձեալ յերկինս, և նստեալ ընդ աջմէ հօր:

Այլ և գալոց է նովին մարմնովն, և փառօք հօր 'ի դատել զկենդանիս և զմե-ռեալս․ Որ և յարութիւն ա̄մ մարդկան:

Հաւատամք և զհատուցումն գործոց արդարոցն կեանք յաւիտենականս, և մե-ղաւորացն տանջանք յաւիտենականս:



Իսկ

Իսկ խոստովանութիւն այն հասարակ, և հրապարակական, որ սկսանի այսպէս։

Մեղայ ամենասուրբ երրորդութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, և այլն։

Բարձցի ամենեւին 'ի միջոյ, և ոչ երբէք և ոչ ուրեք ասիցի, ոչ հրապարակաւ, և ոչ առանձնակի։ Բայց եթէ ոք կամիցի ընթեռնուլ զնոյն մեղայն, առ 'ի բարեպէս քննել զխղճմտանս իւրս, զի կարիցէ 'ի միտ ածել, թէ զորս 'ի մեղացն յայնցանէ գործեալ իցէ, բարւոք առնէ, որպէս զի գնացեալ առ քահանայն խոստովանիցի առանձնապէս։

ԾԸ. Իսկ քահանայն մինչ տայցէ զարձակումն ասելով. Ողորմեսցի քեզ. և այլն. զգուշասցի մի երբէք ասել։ Արձակեալ եմ։ զի բայս այս է անցեալ ժամանակ, և նշանակէ աշխարհօրէն. Արձակածեմ. կամ Արձակել եմ. Այլ ասիցէ. Արձակեմ. որ է ներկայ ժամանակ. և նշանակէ աշխարհօրէն. Այժմ կԱրձակեմ. Ուրեմն այսպէս ասիցէ։

Ողորմեսցի քեզ հզօր և մարդասէրն Աստուած, և թողութիւն շնորհեսցէ, ամենայն յանցանաց քոց, խոստովանեցելոցն, և մոռացելոցն։ Եւ ես 'ի կարգէս քահանայութեան և իշխանութեան Աստուածային հրամանացն. թէ զոր արձակիցէք 'ի յերկրի, եղիցի արձակեցեալ 'ի յերկինս, 'Նովին բանիւն. Ես Արձակեմ ✠ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, 'ի խորհրդոց 'ի բանից, և 'ի գործոց. Յանուն ✠ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ամէն։ Եւ դարձեալ տամ զքեզ 'ի խորհուրդ սուրբ եկեղեցւոյ, զոր ինչ գործեսցես, եղիցի քեզ 'ի բարեգործութիւն, և 'ի փառս հանդերձեալ կենացն. Ամէն։

ԾԹ. Այլ և ամենայն ոք որ կամի գոլ և լինել, և կեալ ուղղափառապէս, պարտի նախ դաւանել զուղղափառ հաւատն, և հրաժարել յամենից հերետիկոսութեանց, և հերձուածողութեանց, և արձակել 'ի կապանաց բանադրանացն։ Եւ ապա պահել զքնաւս զայսոսիկ սրբագրութիւս։ Եւ վարել տօմարաւ և տօնացուցիւ ըստ հրամանի սրբոյ եկեղեցւոյն Քրիստոսի, և ըստ ամենայնի 'ի բանս հաւատոյ և յեկեղեցականս, և հոգևորս կալ 'ի հնազանդութեան սրբոյ կաթուղիկէի եկեղեցւոյ. և գերագունեզի վեհապետի նորին սրբազանի Փափին. որ է փոխանորդ Քրիստոսի 'ի վերայ երկրի, և յաջորդ սրբոյն Պետրոսի Առաքելոյն. և է հայր, և իշխան, և գլուխ, և վարդապետ ընդհանրոյ եկեղեցւոյն Քրիստոսի։

Կ. Այլ և պարտ է ամենայն ոք պահել զնոյն սրբագրութիւս ամենայն ուրեք և ամենայն երբէք նմանս գրեանս, 'ի բանս և 'ի գիրս, մեծաւ զգուշութեամբ 'ի կեցութիւն հոգւոց իւրեանց, և այլոց։

ՎԵՐՋ։

# CORRECTIONES HYMNORVM ARMENORVM.

## ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՇԱՐԱԿԱՆԱՑ:

Ի՛ն գրքոջ, որոյ մակագիրն է այսպէս:

## ՇԱՐԱԿՆՈՑ·

Երաժշտական երգեցմունք հոգեւորականք, տէրունեաց եւ երջանիկ սրբոց վարդապետաց հայոց թարգմանչաց, զկարգաւորութիւն եկեղեցւոյ վայելչացուցանողաց:

Ի թուին. քի ռնկզ. Եւ՛ ի հայոց 1113. յօգոստոսի ամսոյն. ծգ. ի տպարանի տէր էջմիածնի, եւ տէր սարգսի. որ յամստեղօտամի. յերկրորդում աւուր վերափոխման տօնի տիրամօր կուսի:

Սրբագրելիք են այսոքիկ:

ա. Ի յէջն 21. ի տողն. 18. Խորհուրդն անճառելի հօրդն. մի ասիցի. Որ անխառնելի: Այլ ասիցի. Որ անքակտանելի: Այսպէս եւս ասիցի. ի յէջն 28. ի տողն 5. Ուրախացիր սրբուհեոյն հարցն. ի յէջն. 136. ի տողն. 3. Զանն որ ընդ հօրն. տէ. հարցն. Որ համագոյից եւ հաստիչի առաջի գործառուննն: ի յէջն 381. ի տողն 2. ի կարգն յարութե. հարցն, դէկ, փառաւորեալ է անուն քո, երկրորդ եւ չորրորդ գործառուննն: ի յէջն. 719. ի տողն. 22.

Եւ՛ յայլս տեղիս, եթէ սոցին նմանիք գտանիցին:

բ. Ի յէջն. 376. ի տողն. 6. Սրբածահրաշի, Սրբածացուսցէ վերջի տունն. մի ասիցի: զանտեսն: Այլ ասիցի: զանհասն:

Ի յէջն. 421. ի տողն. 6. Արեգականն արդարութեան, որպէս վերջի տունն. մի ասիցի. եւ անտես ի սերոբէից: Այլ ասիցի. եւ անպարփակ ի սերոբէից:

Ի յէջն. 462. ի տողն. 6. Ճառագայթափառացին երկրորդ տունն. մի ասիցի: Որ անտես սրոբէից: Այլ ասիցի: Որ անհուն սրոբէից:

Ի յէջն. 463. ի տողն. 6. Զարցի նորին երրորդ տունն. մի ասիցի. Այսօր անտեսըն յէութեն: Այլ ասիցի: Այսօր անհասըն յէութեն:

Ի նմին. ի տողն. 20. Որորմեայ նորին առաջի տունն. մի ասիցի: զանտեսըն սերոբէից: Այլ ասիցի: զանհասըն սերոբէից:

Այսպէս ասիցին եւ յայլս տեղիս, եթէ սոցին նմանիք գտանիցին:

գ. Ի յէջն. 27. ի տողն. 1. Մակագիրն Ուրախացիր սրբուհիոյն, մի ասիցի. Կանոն տէրայայտնութեան Ծրագալուցին: Այլ ասիցի: Կանոն Ծրագալուցի ծննդեան տն, եւ Աստուածայայտնութեան:

դ. Ի յէջն. 86. 87. 88. Որ զերկնաւոր թագաւորութիւն քո, խւր սարօքն: շարականք ամենայնք, որք գոն, երգիցին յաւուրս տօնից թագաւորաց, ի յեկեղեցւոյ աւփորձեցելոց, եւ ընդունեցելոց. փոխելով միայն զանուանս:

Բայց 'ի յէջն 87. 'ի տողն. 21. Հարցին նորին գործառման երկրորդ տառնն. մի՛ ասիցի: հիմնեցոյց ոչ զեկեղեցի: Այլ ասիցի. զարդարեաց ոչ զեկեղեցի:
'Ի յէջն. 88. 'ի տողն. 4. Ողորմեայն նորին երկրորդ տառնն. մի՛ ասիցի: հիմնեցոյց զեկեղեցի ոչ: Այլ ասիցի: զարդարեաց զեկեղեցի ոչ:
'Ի նմին. 'ի տողն. 12. Տէր երկնիցի նորին երկրորդ տառնն. մի՛ ասիցի: և հիմնադիր ոչ հաւատոյ: Այլ ասիցի: և ջատագով ոչ հաւատոյ:

Ե. 'Ի յէջն. 532. 533. 534. 535. 536. մինչև 'ի տողն 15. Յաղթող և ոչ հայրապետն, իւր սարօքն:
Ասիցեն շարականքն և ժամն, Յակոբայ հայրապետին, եթէ հաւաստապէս նա էջէ Յակոբ եպիսկոպոսն Մծբնայ, զորմէ լինի յիշատակ 'ի յայսմաւուրս 'ի հնգետասաներորդ աւուր Յուլիսի: Ապա թէ ոչ, արգելցեն:
Նմանապէս և, Ասիցեն շարականքն, և ժամն, որք գան. 'ի յէջն. 572. 'ի տողն 1. Արգամանանցն և Պեռնդեանցն, իւրեանց սարօքն. մինչև 'ի վերջն էջին. 583. եթէ հաւաստապէս եղեալք իցեն նոքա ճշմարիտք մարտիրոսք քի: Ապա թէ ոչ, արգելցեն: Ըստ այսմ և եղիցին ընաւք շարականք, և ժամք, յաղագս որոց գան կարծիք և երկբայութիք, ոչ 'ի վերոյ:

Զ. 'Ի յէջն. 91. 'ի տողն. 12. Յաղթող դասուն վերջի տառնն. մի՛ ասիցի: Սա եղև գլուխ առաքելոց սրբոց: Այլ ասիցի: Սա եղև վկայակից առաքելոց սրբոց:

Է. 'Ի յէջն. 101. 'ի տողն. 5. Ծնծայ այսօր եկեղեցի ոչ. մի՛ ասիցի: 'ի վէր վիմի հաւատոյ: Այլ ասիցի: 'ի վէր վիմին հաւատով:

Այսպէս և ասացեն: 'ի յէջն. 452. 'Ի տողն. 19. Յետ. ըզքեզ քաղաք ոչին: 'ի վէր վիմին հաւատով հիման. և այլն ըստ կարգին. 'ի յէջն. 489. 'ի տողն. 2. 'ի վերայ վիմին հաւատոյ. և այլն ըստ կարգին. Նաւակատեաց ոչ խաչին. 'Ի յէջն. 545. 'ի տողն. 3. 'ի վէր վիմին հաւատով հիման ոչ եկեղեցւոյ, և այլն ըստ կարգին: Այսօր սրբոց հայրապետացն ժողովեալքն. Երկրորդ շարականն. Ժողովեալ սուրբ հայրապետքն:

Նաև այլուրեք եթէ սոցին նմանիք հանդիպեսցին:

Ը. 'Ի յէջն. 218. 'ի տողն. 22. Այսօր զուարճացեալի վերջի տառնն. Վերնոր քաղցրախօս. մի՛ ասիցի: առ ըղխեալն 'ի հօրէ փառակից որդւոյ: Այլ ասիցի այսպէս: առ ըղխեցեալն 'ի հօրէ և յորդւոյ, փառակից նոցունց ոչ Հոգին. և այլն ըստ կարգին:

Թ. 'Ի յէջն. 251. 'ի տողն. 13. Թագաւոր գոլով քո աշխարհին, չորրորդ շարականն. մի՛ ասիցի: 'Ի յարութենէ աւուր գալստեան: Այլ ասիցի: 'Ի աւէրունեան աւուր գալստեան: և այլն ըստ կարգին:

Ժ. 'Ի յէջն. 268. 'ի տողն. 18. Աերաձգօղն երկնիցին. Մանկունքն, ոչ, մի՛ ասիցի: Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեն 'ի թողութի մեղաց մերոց: Այլ ասիցի այսպէս: Այսօր կարգեցաւ օրինակ խոնարհութեան 'ի յուղղութի վարուց մերոց. և այլն ըստ կարգին:

ԺԱ. 'Ի յէջն. 277. 'ի տողն. 11. 'ի մէջ այսօր անձաւին. ընդ բաղարջին հաց անխմոր. մի՛ ասիցի: եւ զմարմինն իւր զերկնաւոր, զկուսածինն անսերմնաւոր, զանապական և զհոգևոր: Այլ ասիցի

ասիցէ այսպէս ։ Եւ զմարմին իւր կեն-
սաւոր, զկուսածին անսերմնաւոր,
զանապական և զկենարարն, ընդ ոչխա-
րին արեան ուխտին ։ և այլն ըստ կար-
գին ։

ԺԲ. Ի յէջն. 284. 'ի տողն. 22. Այսօր
անճառ վերջի տունն. Քարոզի 'ի
սքանչելեաց. մի ասիցի ։ զորդի ընդ
հօր փառաւորէ ։ Այլ ասիցի այսպէս.
զորդի ընդ հօր և սրբոյ Հոգւոյն փա-
ռաւորէ ։

ԺԳ. Ի յէջն. 288. 'ի տողն. 9. Աղբե-
րացն անապականի մէջն. մի ասիցի.
թէ ոչ շնորհօք, այլ արտասուօք ։ Այլ
ասիցի. շնորհօք համայն և արտասու-
օք ։

ԺԴ. Ի յէջն. 307. 'ի տողն. 12. Յայտ
որ 'ի հրեղէն աթոռի, տնձ հարցի,
Ողորմեայի միջի տունն. 'ի յարութեան
կարգն. Անկիզելի բանդ. մի ասիցի ։
Այսօր զանմահ, և զանապական մար-
մինն Տն ։ Այլ ասիցի ։ Այսօր զանմահ-
նութեամբ և զանապական մարմինն Տն ։
և այլն ըստ կարգին ։

ԺԵ. Ի յէջն. 313. 'ի տողն. 4. Նորո-
գեալ կղզեքին, Մեծացուսցէ վերջի
տունն. մի ասիցի ։ Զնոր խառնարանդ-
հրաշալի նոր խառնման բանին և մար-
մնոյն ։ Այլ ասիցի ։ Զնոր միարանդ-
հրաշալի նորոյ միաւորման բանին և
մարմնոյն ։ և այլն ըստ կարգին ։

ԺԶ. Ի յէջն. 314. 'ի տողն. 17. Որ եկեր
'ի փրկութեան, տնկ. հարցին աւագի գոր-
ծատունն, 'ի յարութեան կարգն. ուր
ասի ։ Որ անմահըն մարմնով ։ Ներա-
գրեսցի կէտ 'ի մէջ. անմահըն և մար-
մնովն ։ Եւ ասիցի այսպէս ։ Որ ան-
մահըն. մարմնով ։ իսկ այլն ըստ կար-
գին ։

Այսպէս և 'ի յէջն. 650. 'ի տողն. 22.
Ի հանգստեան կարգն, տնձ. որ անճառա-
նօրէնութեանն երկրորդ տունն. Ուր
ասի ։ Որ անչարչարելեդ մարմնովն եկեր
Ներագրեսցի կէտ 'ի մէջ. անչարչարե-
լեդն և մարմնովն ։ Եւ ասիցի այս-
պէս ։ Որ անչարչարելեդ. մարմնովդ
եկեր կամաւ ։ իսկ այլն ըստ կարգին ։

ԺԷ. Ի յէջն. 351. 'ի տողն 10. 'ի յարու-
թեան կարգին վառ ձայնի աւագի հարցն.
մի ասիցի ։ Անճառելի բնութեան և բան
հօր ։ Այլ ասիցի ։ Անճառելի բնու-
թեամբ, և բան հօր ։ և այլն ըստ կար-
գին ։

ԺԸ. Ի յէջն. 351. 'ի տողն. 24. Նոյնոյ
հարցին վերջի գործատունն. մի ա-
սիցի ։ Զանապական լոյսն 'ի հօրէ ծա-
գեալ Տր զհոգին ։ Այլ ասիցի այսպէս ։
Զանապական լոյսն 'ի հօրէ և յորդւոյ
ծագեալ սուրբ զՀոգին ։ և այլն ըստ
կարգին ։
Ի յէջն. 389. 'ի տողն. 11. Առաքելոյ
աղաւնոյն երկրորդ տունն. և երրորդ
տունն. մի ասիցի ։ զոր առեալ 'ի հօրէ
պատմէ ։ այլ ասիցի. զոր առեալ 'ի հօրէ
և յորդւոյ պատմէ ։ և այլն ըստ կարգին ։
Ի նմին. 'ի տողն. 14. մի ասիցի ։ Ելողին
'ի հօրէ հոգւոյն սրբոյ ։ Այլ ասիցի ։
Ելողին 'ի հօրէ և յորդւոյ Հոգւոյն
սրբոյ ։ և այլն ըստ կարգին ։
Ի յէջն. 410. 'ի տողն. 19. 'ի հարա-
շարժ աղբերէին ողորմեայի միջի
տունն. մի ասիցի ։ Որ առաքեցար 'ի
հօրէ կենդանարար վտակ ։ Այլ ա-
սիցի ։ Որ առաքեցար 'ի հօրէ և յորդ-
ւոյ կենդանարար վտակ ։ և այլն ըստ
կարգին ։
Ի յէջն. 422. 'ի տողն. 6. տնկ. Արեգա-
կանն արդարութեանն. դ.ձ. հարցի
տր երկնիցի վերջի տունն մի ասիցի ։
Բղխեցելոյն 'ի հօրէ երգեմք զփառս
'ի բարձունս ։ Այլ ասիցի ։ Բղխե-
ցելոյն

ցելոյն ՚ի Հօրէ և յորդւոյ երգեմք զփառս ՚ի բարձունս:

Ի յէջն · 547. ՚ի տողն · 14. Այսօր սրբոց հայրապետացն, որ երկնեցի երրորդ տունն մի ասիցի: Բղխեցելոյն ՚ի Հօրէ Հոգւոյն սրբոյ: Այլ ասիցի: Բղխեցելոյն ՚ի Հօրէ և յորդւոյ Հոգւոյն սրբոյ: Եւ այլն ըստ կարգին:

Ի յէջն · 597. ՚ի տողն · 20. Լոյս արարիչ լուսոյ, առաջին լուսի · երրորդ տունն · մի ասիցի: Լոյս ՚ի Հօրէ բղխումն աղբիւր բարութե: Այլ ասիցի: Լոյս ՚ի Հօրէ և յորդւոյ բղխումն աղբիւր բարութե: Եւ այլն ըստ կարգին:

Ի յէջն · 654. ՚ի տողն · 16. Հանգստեան · բձ. որ թգր ես թգրցի առաջի գործատունն. մի ասիցի: Զառաքեալն ՚ի Հօրէ զմխիթարիչ: Այլ ասիցի: Զառաքեալն ՚ի Հօրէ և յորդւոյ զմխիթարիչ: Եւ այլն ըստ կարգին:

Այլ և ՚ի յէջն · 403. ՚ի տողն · 10. Հոգեգալստեան հինգերորդի աւուր օրհնութեն · մի ասիցի: Զանսկզբնաբար բղխումն ՚ի Հօրէ զՀոգին Ճշմարիտ: Այլ ասիցի: Զանսկզբնաբար բղխումն ՚ի Հօրէ և յորդւոյ զՀոգին Ճշմարիտ: Եւ այլն ըստ կարգին:

Ի յէջն · 405. ՚ի տողն · 6. Նորին բկ · հարցին վերջի գործատունն · մի ասիցի: Զելողն ՚ի Հօրէ զառատաբուղխ աղբիւրն իմաստից: Այլ ասիցի: Զելողն ՚ի Հօրէ և յորդւոյ զառատաբուղխ աղբիւրն իմաստից: Եւ այլն ըստ կարգին:

Ի յէջն · 407. ՚ի տողն · 5. Հոգեգալստեան վեցերորդի աւուր ուկ հարցն · մի ասիցի: Անճառելի բղխումն ՚ի Հօրէ Հոգիդ Ճշմարիտ: Այլ ասիցի: Անճառելի բղխումն ՚ի Հօրէ և յորդւոյ Հոգիդ Ճշմարիտ: Եւ այլն ըստ կարգին:

Եւ այլուրեք եթէ սոյին նմանիք գտանիցին, նմանապէս ասիցին:

ԺԹ. Ի յէջն · 369. ՚ի տողն · 1. Համբարձման երկրորդ հարցն · դձ · մի ասիցի: Ծագումն միածնի որդւոյ քո ՚ի յերկնից, անսկիզբըն անեղ մարմնացաւ ՚ի սրբոյ կուսէն: Այլ ասիցի: Ծագեցաւն ՚ի քէն միածին որդին քո, ով Հայր անսկիզբն անեղ մարմնացաւ ՚ի սրբոյ կուսէն: Եւ այլն ըստ կարգին:

Ի · Ի յէջն · 391. ՚ի տողն · 9. Առաքելոյ աղաւնոյի հարցին, ուձ. առաջի գործատունն. մի ասիցի: Զելողն ՚ի Հօրէ զէակից որդւոյ սուրբ զՀոգին: Այլ ասիցի: Զելողն ՚ի Հօրէ և յորդւոյ · զէակիցն նոցունց սուրբ զՀոգին: Եւ այլն ըստ կարգին:

ԻԱ · Ի յէջն · 392. ՚ի տողն · 22. Նորին ճաշոյն · բձ. մի ասիցի: Որ ՚ի հարաշարժ ՚ի յաղբերէն յառաջ բղխեալ անհատաբար ՚ի յորդւոյ որպէս սուրբ Հոգին: Այլ ասիցի: Որ ՚ի յարաշարժ ՚ի յաղբերէն յառաջ բղխեցեալ անհատաբար ՚ի Հօրէ և յորդւոյ որպէս սբ Հոգին: Եւ այլն ըստ կարգին:

Այսպէս և ՚ի յէջն, 409. ՚ի տողն 3. Հոգեգալստեան եօթներորդի աւուր օրհնութեն. մի ասիցի: Ի հարաշարժ յաղբերէն անհատահոսըդ վտակ: Այլ ասիցի: Ի յարաշարժ յաղբերէն անհատահոսըդ վտակ: Եւ այլն ըստ կարգին:

ԻԲ · Ի յէջն · 395. Նոյն և նման Հօր և որդւոյն · ուկ · հարցն · մի ասիցի: Որ անիմանալիդ ես յէութե և անպատում Հոգիդ Ճշմարիտ · անսկզբնաբար բղխումն ՚ի Հօրէ, և համագոյակից որդւոյն միածնի: Այլ ասիցի: Որ անբովանդակելիդ ես յէութե, և անպատում Հոգիդ Ճշմարիտ · անսկզբնաբար բղխումն ՚ի Հօրէ և յորդւոյ, և համագոյակից նոցունց Ճշմարիտ: Եւ այլն ըստ կարգին:

Իգ. Դ յէջն. 398. ՚ի տողն. 5. Հոգե-գալստեան երրորդի աւուրն. ՟դ՟ճ. հարցն. մի ասիցէ: Որ բոլորից ես պատճառ էից անպատճառելից, և որոց պատճառաւ. հայր անծին և անսկիզբն, որդւոյ պատճառ անժամանակ ծննդեանն, և հոգւոյ բղխմանն անքննաբար: Այլ ասիցէ այսպէս: Որ բոլորից ես պատճառ արարածոց. հայր անծին, և անսկիզբն, որդւոյ ծնօղ յաւիտենից, և Հոգւոյն սրբոյ բղխօղ ընդ որդւոյ համագիտաբար: իսկ այլն ըստ կարգին:

Իդ. Դ յէջն. 401. ՚ի տողն. 18. Չոր-րորդի աւուր. ՟դկ. հարցի երկրորդ տունն. մի ասիցէ: Որ ես պատճառ որդւոյ ծննդեանն: Այլ ասիցէ: Որ ես սկիզբն որդւոյ ծննդեանն: իսկ այլն ըստ կարգին:

Իե. Դ յէջն. 689. ՚ի տողն. 9. Ա՟ծ անեալ անժամանակն. մի ասիցէ: որդւոյ պատճառ ծննդեանն անճառ, հոգւոյն բղխմանն անքննաբար: Այլ ասիցէ այսպէս: որդւոյ սկիզբն ծննդեանն անճառ, և ընդ որդւոյ Հոգւոյն սրբոյ բղխմանն համագիտաբար: իսկ այլն ըստ կարգին:

Իզ. Դ յէջն. 407. ՚ի տողն. 21. Հոգե-գալստեան վեցերորդի աւուր. ՟ռկ. ողորմեայն. մի ասիցէ: Որ ՚ի հայրական էութենէն յառաջ բղխեալ աղբիւր լուսոյ: Այլ ասիցէ այսպէս: Որ ՚ի հօրէ և յորդւոյ յառաջ բղխեցեալ աղբիւր լուսոյ: իսկ այլն ըստ կարգին:

Իէ. Դ յէջն. 410. ՚ի տողն. 10. Եօթ-ներորդի աւուր. ՟դճ. հարցին առաջի գործատունն. մի ասիցէ: Որ փոխան միածնին իջեալ ՚ի հօրէ: Այլ ասիցէ: Որ փոխան միածնին իջեալ ՚ի յերկնից: իսկ այլն ըստ կարգին:

Իը. Դ յէջն. 549. ՚ի տողն. 9. Ով հրա-շալի նախահարքին. չորրորդ տունն. մի ասիցէ: ՟որ հոգին ելօղ ՚ի հօրէ, էակից որդւոյ: Այլ ասիցէ: ՟որ Հոգին ելօղ ՚ի հօրէ և յորդւոյ, էակից նոցունց:

Իթ. Դ նմին. ՚ի տողն. 13. Նորին հին-գերորդ տունն. մի ասիցէ: միացեալ բնութբ ՚ի յերկուց: Այլ ասիցէ: մի գոլով անձամբ ՚ի յերկուց բնութեանց ախ-տակրեալ իվերայ քառաթև խաչին: իսկ այլն ըստ կարգին:

Է. Ամենայն ոք, որ կամիցի զփրկութիւն և կեցութիւն հոգւոյ իւրոյ պարտաւորի պահել զվերոգրեցեալս սրբագրութիւնս մինչ զոմայնն երգէ ժամակարգութիւն:

Իսկ որք ձեռագրիւ շարականոցաւ եր-գեն զնոյնն, պարտին և սատարել զգու-շանալ, և պահել զվերոգրեցեալսն սրբագրութիւս, զի ըն ձեռագիրս շա-րականոյն և նմանս տպագիրս գտա-նին, երեք այնպիսիք տունք վերջինք, Ով հրաշալոյն: Որք սկսանին այսպէս, Տեսի ես յայնժամ աւէնի, և այլն: Աստանօր անտանելի սուգ հասեալ, և այլն: Գեղեցիկ շաւաւիղ յարմա-րոց. և այլն: զորս պարտի ամ՟ ոք հեր-քել և մերժել, զի մի ցասմանն և բար-կութեանն ամ՟ արդարադատողին առար-կայ լինիցի:

Ը. Գիտելի է ևս, որ սրբազան ժո-ղովն որում յատուկ է հոգալ զհամա-սերումն հաւատոյ, և ՚ի բաց բառնալ զորոմն ՚ի միջոյ ցորենոյն, կամեցաւ միայն սրբագրել զայնոսիկ, որք յայտ-նապէս կամ ծածկաբար հնչեն ընդ-դէմ Ճշմարտութե հաւատոյն, և հետևապէս են ընդդէմ կեցութե հո-գւոց:

Իսկ զխալանս, որք են ընդդէմ ար-հեստի քերականութե կամ հայկաբա-

նութե

նութե, ոչ հաճեցաւ ինքն սրբագրել, զի մի ծանր թուիցի լսողաց. այլ եթող ճշմարտասիրաց վարդապետաց և այլոց գիտնոց ուսումնասիրաց, ո̄պ զի նոքա, որք են քաջապէս տեղեակք հայկաբանութե ըստ տեղւոյն և ըստ ժամանակին խոհեմապէս, և ճշմարտաբար հագայցեն սրբագրել զնոյնս, զի նամենայնում, և ըստ ա̄մի, ճշմարտութիւն ք̄ն գովեսցի. 'ի փառս մեծագոյնս ա̄յ:

## Վ Ե Ր Ջ:

<< Ազգային գրադարան
NL0109842